1895 ՆՈՅԵՄԲԵՐԻ 3 (15) ՈՒՐԲԱԹ

№. 127 ՏԱՍՆԵՐԿՈՐԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 127

1895 ՆՈՅԵՄԲԵՐԻ 3 (15) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:

Առանձին համարը 7 կոպէկ:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատունը և «Կենդրոնական գրավաճառանոցում»:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և ազգ. օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ԱՐՁԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆը (Վերամինսկի փող., № 22, տուն Խանզադամանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ. ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 Ռ.
Օտարաբնակներին պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція "Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal armènien „Ardzagang“
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:

1896-Ի ՔԱՂԱՔԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ
Այն անձինքը և հաստատութիւնները, որոնք ԱՅԺՄԷՆ ԻՍԿ կը ստորագրուին 1896 թուի „Արձագանք“-ին, կը ստանան համարները բաժանորդ գրուելու օրից՝ վճարելով ընդամենը տասը ռուբլի:

ՊԱՀԵՍՏ Գ. ԱԴԷԼԽԱՆԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
Գործարանների արդիւնաբերութեանց
Միջի-փողոցի և Երևանեան հրապ. անկիւն, նախկին գեներալ Տէր-Ասատուրովի տանը:
Առաջիկայ ձմեռուայ համար պահեստում, ի միջի այլոց, կան՝ եափընջու կտորից պատրաստած—կանանց համար ծածկոցներ (բուռնուպի)՝ զանազան գոյների, և զինուորականների ու տղամարդոց համար վերարկուներ նոյն կտորից, եւս եւ թաղիքից տաք ոտնամաններ և զանազան գների եափնջիներ (լեզգու տեսակը) իր բաշխուղներով:
Բոլորն էլ ծախվում են գործարանի գներով: (10—2)

ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ԿՐԱԿԻ ԴԷՄ ԹԻՓԼԻԶՈՒՄ
ապահովագրում է Թիֆլիզի ամեն տեսակ շինութիւնները:
ՏԵԼԵՓՈՆ № 288.
Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրայ և բաց է առաւօտուց 9 ժամից մինչև 2½ը:
Մուտքը՝ Վերամինով. փող., քաղաքային դումայի պօղոց:
(Ռուբ.) (21—16)

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԻԱ ՓԵՈԴՈՐՈՎՆԱՅԻ հանմանաւորութեան ներքոյ եղած կոյրերի խնամակալութեան Կովկասի բաժնի խորհրդի ատենապետուհի տիկին Եւդոկիա Բօրիսովնա Շերեմետիևը՝— յայտնելով ի վիճակի հանրութեան, որ նա նշանակել է 1894 թուի հաշուի քննութեան համար Բաժնի անդամների ընդհանուր ժողով, շաբաթ, նոյեմբերի 4-ին, 4 ժամին կէսօրից յետոյ պ. կառավարչապետի պալատում,—հրաւիրում է իրենց ներկայութեամբ պատուել նիստը թէ Բաժնի անդամներին, թէ այն անձանց, որոնք կը կամենան Բաժնի գործունէութեան հետ ծանօթանալ: (1—1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ
Զէյթունցոց յաղթանակը:
Եւրոպական նաւատորմիղ. — Երկիւղ Կ. Պոլսում:
Դեսպանների պահանջը և Դրան պատասխանը:
Զաքիր փաշայի հեղնական հեռագիրը:
Կ. Պոլսոյ և Տրապիզոնի կոտորածների թիւը:
Իրերի վատնգաւոր դրութիւն:
Պօնտոսցի յանձնաժողովի անդամները:
Մի պատգամաւորութիւն:
«Nord» լրագիրը:
Դարգանելի դրութիւնը:
Մի հեռագիր:
Ճարժումներ Փոքր-Ասիայում:
Բարենորոգմունք յԱմասիա:
Վամբերիի կարծիքը Տաճկաստանի դրութեան մասին:
Օսմանեան բանկի ճգնաժամը:
Կ. Պոլսի սեղանաւորական մեծ տագնապը:
Վերջին տեղեկութիւններ:
Սնանկութեան նախընթաց օրը:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Վերջին հեղեղները Թիֆլիզի և Քութայիսի նահանգում: Մի ազնիւ կարգադրութիւն: Աւազակներին զսպելու միջոցներ: Թիֆլիզի տաճկական փոխ-հիւպատոս: Նամակ Ղուբայից: Կայս. աշխ. ընկ. Կովկասի ճիւղի անդամների ընդհ. ժողով: Զինուորական լրագիր: Նուխուց: «Նոր-Դարի» խմբագրութեան փոփոխութեան ենթարկելու անյաջողութիւնը:
ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ. — Հեռագիր Կաղզուանից: Էրզրումից: Մուշից:
ՖԵԼԻԵՏՈՆ.—Ուլսա:
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԶԷՅԹՈՒՆՑՈՑ ՅԱՂԹԱՆԱԿԸ
Ռուսական գործակալութիւնը հեռագրում է մեզ նոյեմբերի 1-ից.
Կ. ՊՕԼԻՍ.—Փոքր-Ասիայի վիճակը կրկին երկիւղալի է մնում: Մարաշից և Բիթլիսից հաղորդում են թէ նոր շարժումներ են եղել: Զէյթունի բերդի տաճիկ զօրաբանակը անձաւորւ է եղել հայ ապստամբներին, որոնք սիրելով թուրքերի զէնքերին և պատերազմական մթերքներին, գրաւել են թուրքաց զօրանոցները: Նախարարների խորհուրդն զրաւուած է նոր պատերազմական պատրաստութիւններով:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄԻՂԸ — ԵՐԿԻՂ Կ. ՊՕԼՍՈՒՄ
Ռուսական գործակ. ստացանք հետեւեալ հեռագրները նոյեմբերի 1-ից.
ՎԵՆՆԱ. — Թրիէստի "Mattino„ լրագիրը հաղորդում է, թէ Աւստրո-Հունգարական նաւատորմիղը կրկնայ տաճկական ջրերը, որպէս զի միանայ անգլիական և իտալական նաւատորմիղների հետ: «Neue Freie Presse» հաղորդում է թէ նաւատորմիղի ուղարկելը որոշուած էր առաջուանից, երբ դեռ Տաճկաստանում շարժումներ չէին եղել:

Կ. ՊՕԼԻՍ. — Որովհետեւ լուր կար թէ Կ. Պոլսում հայկական նոր ցոյցեր պիտի լինին, ուստի ռուսաց դեսպանը դիմեց հայոց Պատրիարքին: Պատրիարքից ստացուած հաւատաիրը լաւ տպաւորութիւն արաւ նաեւ տաճկական շրջանների վրայ:

ԼՕՆԴՕՆ.—Լուր կայ թէ Օսմանեան և Գրասկոյի նաւային զօրաբանները հրամանագրուած է ծովային իշխանութեան կողմից՝ արագացնել պատերազմական նաւերի զինումը, ի նկատի ունենալով Թուրքիայի կրիտիկական դրութիւնը: Միջերկրական ծովի անգլիական նաւատորմիղի ուժեղացնելու լուրը ճիշտ չէ: Նաւատորմիղը միայն կը հասցնուի իր սովորական չափին:

—

ԼՕՆԴՕՆ.—(«Նով.») «Times»-ը ասում է Քեմբրիդ փաշային հիւանդ-հիւանդ աքսորեցին Զմիռնիա՝ այժմ նաեւ նստացներով: Նրան արգելեցին մինչև անգամ բարեկամներին մնաս բարի ասել:

—

ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ և ԴՐԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Դեսպանները միաձայն պահանջել էին Դռնից միջոցներ ձեռք առնել կոնտրածները դադարեցնելու համար. «Standard»-ի Վիեննայի թղթակիցն այդ առթիւ հեռագրում է, որ Դուռը դեսպանների այդ պահանջին պատասխանել է թէ տաճկական կառավարութիւնը զէնքի է հրաւիրել Տրապիզոնի և բոլոր միւս գաւառների պահեստի զինուորներին: Դեսպաններն այդ միջոցը անբաւարար համարեցին:

—

ՀԱՔԻՐ ՓԱՇԱՅԻ ՀԵՌԱԳԻՐԸ

«Ստեֆանիի գործակալութիւնը» հեռագրում է.—«Զաքիր փաշան ըստանալով ռէֆորմների նոր ծրագիրը, Էրզրումից ուղարկել է Բ. Դրան հետեւեալ հեռագիրը. «Պաշտօնապէս հաղորդել էք քրդերին զինադադարի մասին. այդ հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ հարիւր հազար զինուորից կազմած բանակ ուղարկուի»:

—

Կ. ՊՕԼՍՈՅ ԵՒ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԹԻՒԸ

Պետերբուրգից հեռագ. են «Նով. Օր.»-ին.—Վիեննայից «Նոր-Ազատ Մամուլը» հեռագրում են, որ Կ. Պոլսում անկարգութիւնների ժամանակ սպանուած է 2000 հայ. գրանցից հարիւրը թաղուած է, իսկ մնացածներին ձգել են ծովը: Տրապիզոնում սպանել են 800 հայ:

—

ԻՐԵՐԻ ՎՏԱՆԳԱՒՈՐ ԴԻՐՈՒԹԻՒՆ

Լօնդօնից հեռագրում են «Նով. Գր.»-ին.—Մամուլը շատ յուսահատութեամբ է խօսում Տաճկաստանի այժմեան դրութեան մասին: Ինչպէս երեւում է այդ յուսահատութեան համաձայն է նաեւ արտաքին գործոց Նախարարի օգնական պ. Կերզոնը, որ իր ճառի մէջ ասաց թէ իրերի արտաքին վիճակը շատ վտանգաւոր է և հեռատեսէ աւելի վատանում է:

—

ԿՕՆՏՐՕԼԻ ՅԱՆՁՆԱԾ. ԱՆԴԱՄՆԵՐԸ

Կ. Պոլսից հաղորդում են թէ պատութեանց դեսպաններին ներկայացուած ցուցակը կօնտրօլի յանձնաժողովի անդամների մասին համակրութիւն չի գտել, ուստի և բոլորովին փոփոխուել է: Միայն Զաքիր էֆէնդին է մնացել ցուցակի մէջ նշանակուածներից: Նոր ցուցակին միայն մի քիչ հաւանում են հայերը:

—

ՄԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Լրագրները հաղորդում են իբր թէ Փոքր-Ասիայի հայերը վճռել է Նելիդովին պատգամաւորութիւն ուղարկել՝ օգնութիւն խնդրելու նպատակով:

—

„NORD“ ԼՐԱԳԻՐԸ

„Nord“ լրագրում տպագրուած է հետեւեալ նկատողութիւնը.—«Հայկական հարցն արդէն վճռուած է (!) երեք մեծ պատութեանց համաձայնութեամբ, շնորհիւ սուլթանի համաձայնութեան ռէֆորմներ մտցնել. ուստի մենք («Նորդը») բոլորովին չենք հասկանում ոչ Լօնդոնի կիսապաշտօնական լեզուն և ոչ Կ. Պոլսի անգլիական դիւանագիտական ներկայացուցիչների վարքը:

Լօնդոնի կիսապաշտօնական մամուլը և անգլօ-հայկական կօմիտեները: որոնք բոլոր աշխարհի աչքի առաջ անգլիական հովանաւորութիւն են վայելում, ըստ երեւութին ուրիշ կերպ են մտածում: Նրանք շարունակում են իրենց գաղտնի և վնասակար գործունէութիւնը և ըստ երեւութին ձգտում են վրդովել խաղաղութիւնը, որ ձեռք է բերուած դիպլոմատիայի այդքան ջանքերի և սուլթանի կողմից զիջումների գնով:

Ռուսասանը—շարունակում է «Nord»ը—որ միշտ ճշդութեամբ կատարում է իր պարտականութիւնները և օրինաւոր է իր բոլոր գործերի մէջ, չէ կարող թոյլ տալ այդպիսի վարմունքներ և զուցէ հարկադրուած լինի աւելի իրական միջոցներ ձեռք առնել Արեւելքում խաղաղութիւն ապահովելու համար և որպէսզի պահպանէ իր բարեկամ սուլթանի շահերը»:

—

ԴԱՐԴԱՆԵԼԻ ԴԻՐՈՒԹԻՒՆԸ

«Նովոսթին» գրում են Կ. պօլսից.—«Դարդանելի ամրութեան քննութիւնը, որ յանձնուած էր Գուսադ-փաշային, երեան հանեց տաճկական զինուորական իշխանութեան անբաւականալի անհոգութիւնը և անբարեխղճութիւնը: Օրինակի համար շատ թնդանօթների մէջ գտել են թրուչունների ամբողջ բներ, և դուրս եկաւ որ 35 հարիւրամետրանոց թնդանօթներին համար պէտք է լինում կրցնել 25 րոպէ ժամանակ: Ամրութիւնները և յարմարութիւնները ամենաաբրական են: Սաղարկեցեայ պայթուցիկ տօրպէդները չեն գործում՝ վատ ելեկտրական հաղորդիչների փչացած լինելու պատճառով: Մի խօսքով Անգլիական և ամենայն մի այլ նաւատորմիղ կարող էր ազատ անցնել Դարդանելով և թուրքերը չէին կարող նրանց խանգարել: Այդպիսով այժմ արդէն ոչ մի կասկած չկայ, որ Կ. Պօլիս մտնել ցանկացող նաւատորմիղը կարող էր տիրել նեղուցին: Եօթագրում են որ Դարդանելի մասին ասուածները վերաբերում են նաեւ Բոսֆորին, թէև Բոսֆորի ամրութիւնները ուրիշ նախագծով են շինուած»:

—

ՄԻ ՀԵՌԱԳԻՐ

Կ. Պօլսից «Ռուսաց գործակալութիւն»ը հեռագրում է.—Որովհետեւ Անգլիական նաւատորմիղը գժուարութիւն էր կրում պաշարեղէն ձեռք բերել Լեմնոսում, ուստի հեռացաւ դէպի Սելանիկ: Պետութիւնները Բ. Դրան առաջակութիւն արին, որ եթէ Դուռը եռանդուն միջոցներ ձեռք չառնի, այդ ժամանակ իրենք 1860 թուականի նման կը միջամտեն. այդ առաջարկութիւնը բացատրում է իբրև նախազգուշութիւն թէ պէտք եղած դէպքում եւրոպական պետութիւններն իրենք կը հոգան կարգը վերականգնելու: Ասորիքի դրութիւնը վտանգաւոր է և այնտեղ 20 հազարեակ զօրք է ուղարկուում:

Պաշտօնապէս յայտարարուած է թէ Օսմանեան բանկը երկու ամսով ազատուում է բանկաստմսերը ոսկու հետ փոխանակելուց: Այդ միջոցում արտասահմանից եկող ոսկիից դրամ կը կարարուի: Մամուտը հաստատութիւնները այսուհետեւ պարտաւորվում են բանկային տոմսերն ընդունել:

—

ՁԱՐԺՈՒՄՆԵՐ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅՈՒՄ

Բերլինի լրագիրները հետեւեալ լուրերն են հաղորդում. «Փոքր-Ասիայից անընդհատ ցաւալի լուրեր են գալիս: Ամեն տեղ ուր հայերը բազմաթիւ են յարձակումներ են տեղի ունենում և տաճիկները ճնշող միջոցներ են գործ դնում նրանց դէմ, մանաւանդ այնտեղ ուր իրենք թուով աւելի են: Մի քանի դեսպաններ կրկին դիմեցին պատրիարքին խնդրելով հանգստացնել հայերին, բայց ինչպէս երեւում է պատրիարքն այլ ևս այժ չունի շարժումները դադարեցնել: Մինչև անգամ ասում են թէ դեսպանները խորհուրդ են տուել Դրան շտապցնել իր զինուորական պատրաստութիւնները (!): Դիւանագիտական շրջաններում ամենքի տրամադրութիւնը լարուած է: Ենթադրում են որ մի առանձին կառավարութեան միջամտելուն արգելք լինելու նպատակով պետութեանց մէջ կարծիքների փոխանակութիւն կը լինի, բայց դեռ նրանցից ոչ ոք չէ վճռում առաջին քայլն անել այդ ուղղութեամբ:

—

ԲԱՐԵՆՈՐՈԳՄՈՒՆՔ ՅԱՆԱՏՕԼՈՒ

Անատօլուի նահանգաց քննիչի օգնական կարգուած է Առևտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութեան վիճակագրութեանց տընօրէն Ֆէլթէի պէյ:

(Ինչպէս յայտնի է, Ֆէլթէի պէյ Սուրիայի վախճանեալ Ֆրանքօ փաշայի որդին է և աներորդի Լիբանանու կառավարիչ Նասում փաշայի: Ֆրանքօ փաշայի ընտանիքը կը վերաբերի Հալէպցի կաթոլիկներու ծանօթ ցեղի մը, որոյ անդամները կարեւոր դիրքեր գրաւած են թէ Սուրիոյ մէջ և թէ կառավարական պաշտօններու մէջ՝ ասա ի Կ. Պոլիս: Ֆէլթէի պէյ երկար ժամանակ Խարիճիյէի օտար թղթակցութեանց դիւանին պետն եղած է: Յետոյ եղաւ Բեգրասուրիի օսմանեան դեսպանատան առաջին բարտուղար և ժամանակէ մը ի վեր կը վարէ Առևտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութեան վիճակագրութեանց դիւանի տնօրէնի պաշտօնը: Իր եղբայրը Եուսուֆ պէյ Խարիճիյէի մէջ պաշտօնեայ է):

—

Սապահի այս օրուան թուոյն մէջ հետեւեալը կը կարդանք.

Ամեն տեղ, տէրութիւնք և կառավարութիւնք երբ ո և է կարգադրութիւն մը կամ տնօրինութիւն մը մտադրեն, ասոնց գործադրութենէն առաջ, այլ և այլ անձինք տեսակ տեսակ մեկնութիւններ կուտան՝ չկրնալով ըմբռնել ու քննել մտադրեալ նպատակն ու բաղձանքը: Եւ երբ իրաց ճշմարիտ վիճակը երեան ելլէ, յետոյ զարձեալ ամէնէն առաջ իրենք կը հասկնան իրենց գաղափարին ունայնութիւնը:

Այսպէս, զարմանօք կը լսուի թէ կարգ մը երեւակայական գաղափարներու գոյութիւն տալ կուզուի այն բարենորոգմանց համար, զոր վերջերս կայսերական կառավարութիւնը հրատարակեց, որոց գործադրութեանը արդիւնքին սպասել հարկ էր:

Բարձրեալն Ասուած երկար կեանք շնորհէ. Վեհ. Սուլթանն. Իր Գահակալութեան բարեբաստիկ օրէն ի վեր, ինչպէս երախտագիտութեամբ ու պանծանօք կը տեսնուի, Իրեն նպատակ ընտրած է՝ երկրին կազմութեանն ու պէտքերուն համաձայն բարենորոգումներ ու զարգացման միջոցներ պատրաստելով՝ երկրին ու տէրութեան փրկութիւնը ապահովելու և բոլոր հպատակներն, առանց բացառութեան, շնորհաց, անդորրութեան, ապահովութեան և արդարութեան արժանացնելու կարեւոր խնդիրը:

Տէրութեան՝ սիրող և գործադրութեան վրայ եղող օրինաց ու կանոնների շրջանակին մէջ ամեն անհատի իրաւունքները պահպանուած են: Ժողովրդեան մէկ մասին շահերը չեն կրնար խանգարել ժողովրդեան միւս մասին մասնաւոր շահերը: Հետեւաբար աւելորդ է ըսել թէ տէրութիւնն այդ կարգի հանգամանական գործողութիւն մը ոչ միայն չկրնար կատարել, այլ նոյն իսկ մտքէն անգամ չի կրնար անցնել:

Տէրութեան մտադրած միջոցներուն գործադրութենէն առաջ երեան հանուած անձնական խորհրդածութիւններ և գաղափարներ լոկ կարծիքներ են, որք չեն համապատասխաներ իրաց ճշմարիտ վիճակին: Աւելորդ կը համարինք ոչ թէ հերքելու, այլ նոյն իսկ ուզղելու այդ կարգի կարծիքներ, որք անգիտակցութեան արդիւնք են:

Հետեւաբար պէտք է գիտնալ թէ մեր Լուսամիտ Վեհապետն Իր բոլոր կայս. հաւատարիմ հպատակաց, առանց բացառութեան, գորովագութ հայրն է և ամեն անհատ հաւասարապէս կարժանանայ Ն. Վեհափառութեան գթութեանը: Վեհ. Սուլթանը կը բաղձայ որ հանրութեան շահերն ու իրաւունքներն ամբողջովին պաշտպանուին և շնորհիւ Ն. Վեհափառութեան, մինչև վերջը գործառնութիւնք այս հիման վրայ պիտի կատարուին. ուստի ասոնք գիտնալով՝ ամենուն համար անհրաժեշտ է երախտագէտ ըլլալ Օգոստափառ Վեհապետին շնորհքներուն: («Արեւելք»):

—

ՎԱՄԲԵՐԻԻ ԿԱՐԾԻՔԸ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յայտնի տաճկամոլ Վամբերիին այցելել է «Neue Freie Presse»ի աշխատակիցը և երկար զրոյց է ունեցել նրա հետ: Վամբերին այսպէս է ձեւակերպել իր կարծիքը Տաճկաստանի այժմեան դրութեան մասին. «Եթէ Եւրոպան ընդհարումն է ուզում ունենալ, դրա համար հայերը, մակեդոնացիք և կրետացիք կարող են շատ պատրուակներ առաջացնել, իսկ եթէ նա (Եւրոպան) ուզում է թողնել որ իրերն իրենց բնական ընթացքով գնան, այն ժամանակ թող բաւականանայ այժմեան ռէֆորմներով՝ հետեւելով միայն նրանց իրագործման և սպասելով հետեանքներին: Համեմատելով Տաճկաստանի այժմեան դրութիւնը սրանից քառասուն տարի առաջ նրա ունեցած վիճակի հետ, ես գալիս եմ այն եզրակացութեան, թէ չնայելով անշարժութեան և Արեւելքին յատուկ անփութութեան, այնու ամենայնիւ շատ բան է արուած Տաճկաստանում յառաջադիմութեան ոգով: Օրինակ ժողովրդական կրթութեան գործում ուրախալի հետեանքների են հասած (!): Տաճկաստանում աւելի պակաս է անգրագէտների թիւը քան Եւրոպայում, միջնակարգ և բարձրագոյն դպրոցների թիւը նկատելի կերպով աւելանում է (!), օտար լեզուներն ուսումնասիրվում են մեծ հաճոյքով: Իմ ժամանակ տաճիկ օրիորդներին բոլորովին դպրոց չէին ուղարկում, իսկ այժմ օրիորդաց դպրոցները բաւական շատ կան և աշակերտուհիների թիւը հազարներով է հաշուվում: Վերջերս Կ. Պոլսում նոյն իսկ լրագիր ըսկըսեց հրատարակուել յատկապէս գեղեցիկ սեռի համար: Ինչ վերաբերում է զօրքին, ամենքին լաւ յայտնի է որ տաճիկ զինուորը իր յատկութեամբ պակաս չէ գերմանական զինուորից: Առաջ օֆիցէրների պակասութիւն էր զգացվում. այժմ այդ պակասն էլ լրացած է, որովհետեւ ամբողջ ¼ դար շարունակ շատ երիտասարդ թուրքեր զինուորական ծառայութիւն են սովորում գերմանական և ֆրանսիական բանակներում. բացի դրանից շատ քաջ օֆիցէրներ են եղել Կ. Պոլսի զինուորական դպրոցից, որ երկար ժամանակ կառավարում էր Գոլվէս-փաշան: Մի խօսքով, եթէ Տաճկաստանին հանդիպած թշնամն՝ արեւելեան հարցը ոչ մի միջամտութիւն չի պահանջի, իսկ ընդհակառակն՝ եթէ նրան պատին սեղմեն, այն ժամանակ նա եւրոպացու կարծիքից աւելի ընդդիմութիւն ցոյց կը տայ, որովհետեւ տաճիկ ազգը զարթնել է, լցուած է հայրենասիրութեան զգացմունքով և անպատիժ թոյլ չի տալ, որ իրեն ընաջինջ անեն երկրի երեսից»:

—

ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԿԻ ՃԳՆԱԾՄԸ

«Berliner Tageblatt» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը Տաճկաստանի դրամական կրիզիսի մասին հաղորդում է հետեւեալը. «Օսմանեան բանկի արժեթղթեր ունեցողները շրջապատել են այդ բանկը և ազազակով պահանջում են որ իրենց արժեթղթերը ոսկի փոխուի: Կարգը պահպանվում է միայն ուժեղ ոստիկանական գնդի միջոցով: Խնայողական գանձարանը 8 ամիս սրանից առաջ 40,000 տաճկական ֆունտ ոսկի է պահուել օսմանեան բանկին մի տարի ժամանակով: Այդ դումարն այժմ նա յետ է պահանջել մինչև անգամ համաձայնուելով ղրկուել ոսկուից, բայց չէ տացել, որովհետեւ նրա յայտարարութեան համեմատ այդ աւանդը նրան կարելի է

յետ տալ միայն 4 ամսից յետոյ։ Այդ բանկում պահպանվում է նոյնպէս առողջապահական խորհրդի աւանդը 25000 ֆունտ ստ. Անգլիական գեղեցատ Դեկսոնի առաջարկութեամբ խորհուրդն այդ աւանդը յետ պահանջից և բանկն իսկայն կատարից այդ պահանջը։ Բանկը մերժում է 50 ֆունտ գումարից պակաս աւանդների յետ տալը, յայտարարելով թէ այդ կարող են դուրս տրուել միայն պայմանաժամը լրանալուց յետոյ։ Զատերը, որոնք փոդ ունին օսմանեան բանկում, գիմում են սէրաֆների աջակցութեան այդ գործառնութեան ժամանակ մեծ գումարներ կորցնելով։ Բանկն այժմ գումարներ է ստանում իր արտասահմանեան բաժիններից։ Եգիպտական նաւը հոկտեմբերի 22-ին պիտի բերէր 50,000 ֆունտ, Լօնդօնից ուղարկուած է Մարսէլի և Թրիեստի վրայով 200000 անգլիական լիրա, Փարիզից կը ստացուի 50,000 ֆունտ. իսկ ընդամենն արտասահմանից կուղարկուի 300.000 ֆունտ ստերլ.։ Արտասահմանեան այդ դրամները պէտք է այստեղ վերաձուլուին տաճկական լիրաների և յետոյ գործածութեան մէջ մտնեն։ Հաստատ լուր կայ որ Օսմանեան բանկի կառավարիչ Էդգար Վինտոնը հրաժարական է տալիս»։

Կ. ՊՕԼՍՈՅ ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ ՄԵԾ ՏԱԳՆԱՊԸ

Բազմաթիւ սնանկութիւնք

Ի՞նչ տեսարան՝ Զալաթիոյ Սակարանին երեկի վիճակը։ Մի քանի շաբաթ հետէ գալուստն արդէն նշմարուած արժեթղթոց տագնապն երէկ իր գագաթնակէտն հասած կը թուէր։ Երկրորդական վաճառողք ու գնողք արտում տխուր լռութեան դատապարտուած էին, և սանդուխներուն վրայ գրեթէ անձայն բազմութիւն մը յաջորդած էր առջի օրերուն աղմկալի առուծախի զուռում զուչումներով, զի հիմակ ամէն ոք իւր վընասը կը հաշուէր, պարտքերին չվճարելով յոյս տուող շահագէտներուն թիւը ճշգել կը զրաղէր, և կամ գրասենեակներին գոցելու կէտին հասած միջնորդներուն վիճակը կը դիտէր։ Իրենք իրենց թող տրուած, արժեթուղթերը գլխիվար կը գահավիժէին թաւալգլոր։ Մէկ օրուան մէջ Քոնսոլիտէին մէկ ոսկի անկումը, կամ երկաթուղիին 10—15 ֆր. կորուստը շատ տարիներէ ի վեր լսուած բան չէր։ Անկման պատճառն եռապատիկ էր.

Նախ, Հանքային կամ Հարաւ-Աֆրիկեան բաժնեթուղթերուն մէկ-երկու շաբաթի ի վեր կրած ծանր անկումն Արևմտեան հրապարակաց վրայ։ Այս անկման ուղղակի շարժառիթն եղած էր շահագիտութեան չափազանցումը։

Երկրորդ, Արեւելքի երեկի թուով յիշուած տեղական ինքնահնար թուղթերուն վրայ չափազանց շահագիտութիւնն, որով անոնց գիները տարապայման բարձրանալով, անխուսափելի անկումը գրեթէ զամեն ոք անպատրաստ վիճակի մէջ գտած էր։

Երրորդ, միւս կանոնաւոր և ընդունելի արժեթուղթերուն, ինչպէս Քոնսոլիտէ, Բումելիի երկաթուղի, Ռէժի և Օսմ. Պանքա, հետզհետէ ծախուիլը, ի Զիւրիխ, Փարիզ և գլխաւորապէս Լոնտոն, որով վարէն եկած հեռագրերուն վար գիներ նշանակելը։

Այս երեք տարբեր սեղանաւորական հոսանքներ միանալով Զալաթիոյ Սակարանին մէջ, քշեցին տարին ոչ միայն 1,000 էն 3,000 ոսկինոց միջնորդներն ու խաղացողներն, այլ և աւելի կարեւոր շահագէտներ, որոց աւելի ծանր վընասներ պատճառեցին, և ադետալի երեւոյթ մը տուին Սակարանին իւր ամբողջութեամբ։ Միջնորդներն արդէն կը զգային թէ տագնապը շատ ծանր էր, թէ գիները բռնելու և տարբերութիւնները դարձնելու ոյժը խիստ սահմանափակ էր, ուստի երէկ Սակարանին բացումը ժամը 5-էն հաքը կատարեցին, որպէս զի ամէն ոք քիչ մը ինքզինք ժողվէ, բայց տագնապին ծանրութեան բաղդատմամբ դիմադրող ոյժերն այնքան սակաւ էին որ շատ չ'անցած ամէն սեղանաւորական կարգ ու կանոն կրնանդարուէր։ Գիները չրռնուեցան, և Արևմտեան հրապարակներէն եկած սեղանաւորական անոնպատ հեռագրերու ազդեցութիւնն աւելի ևս շեշտուեցաւ մեր հրապարակին ներքին տկարութեան բերմամբ։ Երբ նոյն իսկ կանոնաւոր թուղթերուն երեսը նայող չկար, կրնայ մակարերուիլ թէ միւս երևակայական թուղթերուն վիճակն ինչ կրնար ըլլալ։ Էնդրբրայզ, Քորբորէյշն, Էքսբորդ, Սիկաէդ, Սէրիներ և այլ թուղթեր առաջուան վստահութեան համապատասխան անվստահութեամբ կը թողուէին հրապարակի վրայ։ Խոհեմութիւնն ի սկզբանէ ձեռքէ ձգելու չէր։ Հապա այն Թրասվալիա ըսուած բոլորովին մտացածին թուղթը։ (Շշփոթել Թրանսվալի հետ, թէպէ այն ալ մեծ բան մը չարժէր այժմ։) Ո՞ն որ տեղէն եկած ինկած էր մեր Պորսային մէջ։ Կը պատմուէր թէ ճարպիկ Հրեայներ տնոր մեզբական կենդանին հինգ ֆր.-ի գնելով Փարիզէ, հոս մտցուցած էին հատը 15 ֆր.-ի, բայց երէկ ոչ հատով առնող կար ոչ կենդինարով։ Ո՛չ այսքան պատիւ պէտք էր, ոչ այսքան անպատուութիւն, անանկ չէ։ Կը մոռթենք որ տագնապն աւելի երկար չտեւէ, ու յանդուգն շահագէտներուն և անոնց անխիղճ առաջնորդներուն համար՝ ոչք որ են՝ շահաւետ և յիշատակելի դաս մը ըլլայ Զալաթիոյ Սակարանին վերջին քանի մը օրերուն խղճալի վիճակը։

Բ. Ք.

Ինչպէս մեր այս աւուր Սակարանի գուցակէն ալ պիտի երեւի, այսօր արժեթուղթերը նոր անկում մը կրած են, որոյ հետևանքով թղթոց տուրհատի գործառնութիւնը և սթիլանցի հաշիւը բոլորովին դադարեալ կը մնան։ Գիներ ալ կան որք լոկ անուանական են, տուրհատի յանդգնողներ չըլլալուն պատճառաւ։

ՊՈՇՏՕՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՒՄ.—Նախարարաց Խորհուրդն հետևեալ որոշումները տուած է, որք վաւերացած են կայս. Իրատէով.

Նկատելով որ Եւրոպայի և Օսմանեան երկիրներու հրապարակաց վրայ դրամական սաստիկ տագնապ կայ և ասոր հետեւանքը եղող գործոց դադարում, նկատելով որ դրամի նուազութիւն ալ կայ և նկատելով որ արդարութիւնը կը պահանջէ պարտատէրներու այնպիսի պայմանաժամ տալ, որով կարելի ըլլայ իրաց վիճակը կանոնաւորուած միջոցին իրենց պարտքերը վճարել. ուստի հետեւեալները որոշուած են.

Պայմանաժամ ունեցող, կամ ի՛ տես վճարելի փոխանակագիրներէ և հրամանի գրուած կամ բերողին վճարելի բոլոր մուրհակներէ անոնց, որոնց պայմանաժամներն այժմ լրացած են, զումարները հատուցանելու համար ներկայ Ցայտարարութեան թուականէն սկսեալ կարելի է հարիւր քսան օր պայմանաժամ պահանջել։

Նոյնպէս վերոգրեալ մուրհակներէ անոնց համար, որոց պայմանաժամն այդ հարիւր քսան օրուան պայմանաժամէն առաջ կ'աւարտի, կարելի պիտի ըլլայ այդ պայմանաժամին աւարտելուն հատուցանելու համար պահանջում ընել։

Այս որոշում չվերաբերիր այն մուրհակներու համար, որք ներկայ Ցայտարարութեան թուականէն յետոյ կը տրուին։

Իրրև թոյլատուութիւն տրուած այս պայմանաժամ գործադրելի է նաև սակարանի գործառնութիւններէ եղած յանձնառութեանց ինչպէս նաև ընթացիկ հաշիւներու համար։

Պայմանի տակ եղած տոկոսները մինչև վճարման օրը պիտի հաշուին որոշեալ քանակութեան համաձայն։ Եթէ պայմանադրութիւն չլլայ, տոկոսը հարիւրին վեցի հաշուով պիտի ըլլայ՝ մուրհակներու պայմանաժամին աւարտելու թուականէն սկսելով մինչև վճարման օրը։

Առուծախէ և առևտրական ապրանքներու գնումէն զոյացած պարտքեր այս որոշմանց ենթակայ չեն։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Ռուսական գործակալութեան վերջին տեղեկութիւնները հայկական խնդրի մասին շատ կարևոր են թերևում մեզ։

Գ. Պօլսից եկած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ սուլթանը, որի ձեռքին է իսկապէս ամբողջ Տաճկաստանի վիճակը, շուտափոյթ և միմեանց հակառակ կարգադրութիւններով լրացնում է այն ընդհանուր խառնաշփոթութիւնը, որ մօտենում է կատարեալ անիշխանութեան։ Տարբերութիւնը սկսում է ոչ միայն կենդրոնից՝ Պօլսից, այլ անցել է արդէն և դաւառները։ Ահա մի փոքրիկ պատկեր իրերի դրութեան Էրզրումում, որ սակայն կարող է ընդհանուր ծաւալ ստանալ.

«Օֆիցէրները և ատիճանաւորները, որոնք պետական ծառայութեան մէջ են, երեք-չորս ամիս ռոճիկ չեն ստացել։ Պաշտօնեաների այդպիսի դրութիւնը առիթ է տալիս ճնշելու և նեղացնելու վաճառական դասակարգին և կատարելապէս ապրելու և հարստանալու ապրարնակութեան հաշուով։ Ժողովրդի մէջ լուր է տարածուած, իբր թէ սուլթանի հրամանով օրֆիցէրները և զօրքը իրենց ռոճիկը պիտի ստանան ժողովրդից։ Ոչ մի կարգապահութիւն չկայ զօրքի մէջ։ Ամեն օր զինուորները բացէ ի բաց անհնազանդութիւն են արտայայտում իրենց մեծաւորների դէմ։ Ազգաբնակութիւնն առանց կրօնի խտրութեան դանդաւում է. քաղաքում տիրում է ընդհանուր յուզմունք։ Առհասարակ վարչութիւններում տիրում է կատարեալ անիշխանութիւն։ Սպասում են, որ զօրքերում առաջ կրգայ բացայայտ ապըստամբութիւն»։

Եւրոպայից ու մայրաքաղաքից եկած բոլոր տեղեկութիւնները նոյնն են հաստատում, որ ամբողջ Տաճկաստանում իրերի դրութիւնը շատ վտանգաւոր է և այդ հանգամանքը այլ ևս անհնարին է ծածկել կամ քողարկել։ Դորանով պէտք է բացատրել վեց մեծ պետութիւնների միախսումը պահանջը սուլթանից, որ նա աւելի զօրեղ միջոցներ գործադրէ կարգը վերահաստատելու, թէպէտ առաջուց յայտնի է, որ այդպիսի միջոց սուլթանի ձեռքում այլ ևս չկայ։

Սուլթանն էլ ձեռնարկեց իւր վերջին, այն էլ ֆիկտիվ միջոցը, փոխեց մի քանի նոխարարներին։ Երեկուայ Քեամիլ փաշայի qausi «քաբինետրիչ, նախարարութեանը փոխարինել է Բիֆամի փաշայի նոր նախարարութիւնը։

Գուցէ այդ ամենը ի նկատի առած լորդ Սալիսբուրին իւր վերջին ճառում կոսկած է յայտնում, թէ տաճիկ կառավարութիւնը երբ և է ընդունակ լինի իւր սեպհական միջոցներով բարենորոգութիւն։ Նոյն պատճառով պէտք է բացատրել վեց մեծ պետութիւնների դեսպանների սպառնալիքը, թէ իրենց տէրութիւնները ստիպուած կը լինին սեպհական միջոցներ գործ դնել քրիստոնեաների ապահովութեան համար Փոքր Ասիայում։

Միևնոյն ժամանակ հեռագիրները հաղորդում են, որ Գրանսիայի, Իտալիայի և Աւստրիայի ռազմանաւերը լսում են դէպի տաճկական ջրերը։

Կարծեօք մենք շուտով հանդիսատես կը լինինք հայկական խնդրի զարգացման մի նոր շրջանի, ուր ներգործական դեր խաղացողներ պիտի լինին հայկական բարենորոգութիւնները իրագործելում վեց մեծ պետութիւնները...

N. N.

ՍՆՆԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՑ ՕՐ

«Հիւանդ մարդը» սոսկալի տագնապի մէջ է։ Տաճկաստանը իր սկզբնաւորութիւնից մինչև այսօր այսպիսի անձուկ տագնապ չէ տեսել։ Մի շաբաթից ի վեր հասնող հեռագրական լուրերը և պաշտօնական ու մասնաւոր տեղեկութիւնները ամենայն հեռականութեամբ ապացուցանում են որ Տաճկաստանում սկսուել է ընդհանուր քայքայումն։

Տնտեսական և զրամական ճգնաժամը իրրև հաղարդլխեան վիշապ բացել է իր որկորը և սպառնում է ոչնչացնել Օսմանեան կառավարութիւնը։

Մինչև այժմ դրսից ոչ մի առանձին շօշափելի վտանգ չկար Օսմանեան կառավարութեան. այլ կատարվում էր ներքին քայքայման մի պրոցես, բայց կատարվում էր արագ։ Փոքր-Ասիայի բոլոր ժողովրդի քաղցը և յուսահատութիւնը տաճիկ կառավարութիւնը փորձեց ոչնչացնել հրամանագրերով, պահեստի զօրքեր հրաւիրելու յայտարարութիւններով, բայց տաճիկ ժողովուրդը և զինուորներն իսկ ձանձրացան իրենց խժդժութիւնից, քաղց զգացին, հաց են ուզում. առևտուրը, երթևեկութիւնը դադարեց, հունձը մնաց անթող, նոյն իսկ տաճիկ ժողովրդին և զանձարանին սնունդ տուող երկիրը աւերածութեան մատնուեց և յանկարծ սկսուեց արագ քայքայումն։ Տաճիկ կառավարութիւնը կարծում էր թէ աներևակայելի արագ ճնշող միջոցներով կարող է «մաքրը խաղաղացնել», բայց հէնց ինքն իր վարմունքով հեռը-հեռէ աւերելով իր երկիրը մարդկանց հասցրեց յուսահատութեան և մի օր դէմ առ դէմ մնաց իր անխուսափելի սնանկութեան առաջ։ Սուլթանի մայրաքաղաքում Օսմանեան բանկը, որ աշխարհիս ամենաապահով բանկերից մէկն էր, այսօր ինչպէս հաղորդվում է պաշտօնապէս՝ «չրջապատուած է աւանդատուներից, ամենքը յետ են պահանջում իրենց աւանդները և ոստիկանութիւնն է կարգ պահպանում»։ Միթէ սա սնանկութիւն չէ։ Ծառայողները պահանջում են իրենց ապառիկ մնացած ռոճիկները, ոստիկանները պահանջում են, որովհետև հասարակութիւնն այնքան ազատացել է, որ պաշտօնեաները այլ ևս նրանց կողոպտելու հնարաւորութիւն չունին, նոյն իսկ զինուորները գլուխ են բարձրացրել և պահանջում են իրենց ռոճիկները։ Հաց, հաց, գոռում է Տաճկաստանի բոլոր ժողովուրդը, և քաղցը, կաշուի խնդիրը մոռացնել է տուել կրօնական և ցեղական հակառակութիւնները, իսկ սուլթանը . . . նա խնդրում է անգլիական կառավարութեան որևէ անկարգութեանց դէպքում իրեն ապաստանարան տալ անգլիական նաւի վրայ։ Ամենայն ինչ կատարեալ է։

Բայց այդ միայն ներքինն է. իսկ արտաքինն աւելի սոսկալի։ Այսօրուան հեռագրները և տեղեկութիւնները միաձայն հաստատում են որ եւրոպական պետութեանց նաւատորմիղները համախմբվում են փակել Տաճկաստանի մեռնող հաշուեզրքերը։

Այո, Տաճկաստանը այսօր գտնվում է սարսափելի սնանկութեան նախընթաց օրուան մէջ և նրա անկումն անխուսափելի է։

Ս. Հ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՀԵՂԵՂՆԵՐԸ ԹԻՖԼԻԶԻ ԵՒ ՔՈՒԹԱՅԻՍԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Վերջին երկու շաբաթուան ընթացքում Քութայիսի և Թիֆլիզի նահանգներում անընդհատ տեղացող անձրևները սոսկալի հեղեղներ առաջացրին, որ երկիրը ենթարկեց մի քանի տասնակ միլիոն վնասների և սարսռ նոյնպէս մարդկային զոհեր։ Ամենամեծ վնասը հասել է Ձորոպանի գաւառում առաջացած հեղեղներից Գովկասեան երկաթուղուն։ Թէ ինչ աւերումներ են եղել Թիֆլիզ-Բաթումեան գծի վրայ, այդ արդէն պարզ է երկաթուղու վարչութեան ուղարկած շրջաբերականից. այդ շրջաբերականը հաղորդում է թէ մի ամբողջ ամիս գուցէ և աւելի երկաթուղով երթևեկութիւնը կը դադարի Թիֆլիզի և Բաթումի մէջ։ Ձորոպանի կայարանից հեռագրում են որ ճանապարհն աւերուած է. հեղեղը քշել է նոր կայարանի շինութեան մի մասը, ջրանցքը քանդել է։ Աւերածի մանրամասն նկարագրու-

---

ՖԵԼԻԵՏՕՆ

ՈՒՐԲ

(Մէզերուա)

Անցեալ չորեքշաբթի Մոնմարթրի գերեզմանատունը գնացի. նպատակս էր սովորական ուխտ կատարել և իմ սիրելի էակների շիրիմների վրայ ծաղիկ սփռել, այն էակների, որոնց յիշում եմ մեզմ ու տխուր վշտով։ Սիրում եմ այդ գերեզմանատունը. դա Père Lachaise գերեզմանատան պէս փառասիրութիւնը չունի, բայց այնպէս առանձնացած չէ, աւելի է դիւր գալիս փարիզցիներին և ասես՝ աւելի մօտիկ է մեզ։ Թւում է, թէ այնտեղ թաղուածները քիչ են մոռացուած և խորհրդաւոր թելերով կապուած են մեզ հետ։ Գէաք է դուրս գալ գերեզմանատան ցանկապատից, և ձեր առաջն ընկած պարտէզը յափշտակում է ձեզ իւր եռուն կեանքով, իւր աղմկալի խնդութեամբ, և թախիծը, որ անցեալի յիշողութիւններն էին ազդել, կենդանի իրականութեանն հանդիպելով՝ գոլորշիանում է։

Երկինքը գորշ էր, եղանակը զեղեցիկ, երբեմն ամպերի տակից դուրս էր նայում աշնանային դժգոյն արևը և ընկնում երկաթեայ վանդակների, մեռելայ պակների ու փոքրիկ մատուռների ոսկեզօծ զրուագների վրայ. արևն ընկնում էր և սնոսի մաքիր զարթեցնում այդ լոյսի մասին. թւում էր, թէ նա գերբնական է և երկրի խորհրդաւոր անդունդներին է ծագում։ Ծառերը՝ գրեթէ մերկացած՝ թափում էին վերջին գեղին տերևները։ Այդ տերևները մէկը միւսի հետից ընկնում էին գետնին, դանդաղ պտտում՝ ասես գերմանական վալսի մելամաղձոտ եղանակով։ Ես զբնում էի նեղ ծառուղիներից մէկով. չնայած բնական սկեպտիքականութեանս՝ ակամայ ենթարկւում էի շրջապատող իրերի ազդեցութեանը. յիշողութեան մէջ կենդանանում էին սիրելի, այժմ անհետացած դէմքեր. պատանեկութեան օրերին էի դառնում, հեռուս անցեալից հազարաւոր մանրադէպեր էի յիշում. ինչպէս թառամած ծաղկի մոռացուած հոտը, այդպէս էին այդ մանրադէպերը արթնանում մտքիս մէջ։

Մարդկային սնափառութեան կանգնած յուշարձանների վրայ խայտաբղէտ երևում էին մեծանշիւն՝ այժմ արդէն մոռացուած անուններ և իրենց անհոգ տեսքով երկրային փառքի ունայնութեան մասին էին խօսում։ Անուշադրութեան մատնուած այն ակնաւոր մարդկանց յուշարձանների մօտ կային անյայտ մարդկանց շիրիմներ՝ ծածկուած ծաղիկների ու հաղուագիւտ բոյսերի միջև. այդտեղ էր անկեղծ և խորին վիշտը։

Այսպէս էի մտմտում՝ չորացած տերևների վրայով առաջ անցնելով, որոնք ոտքերիս տակ շշշիւն էին հանում. յանկարծ իմ ուշադրութիւնը գրաւեց մի հազիւ լսելի ձայն, որ նման էր սօսափիւնի։ Հեռուից այդ ձայնը կարելի էր թըշուունների վիտուններ շարժման տեղ ընդունել։ Բայց երևակայեցէք իմ զարմանքը, երբ հանդիպակաց ծառուղու վրայ երկու տիկին նկատեցի։ Նրանցից մէկը սաստիկ սղզղեաց էր, բայց շքեղ հագնուած։ Նա զեղեցիկ էր. չէկ մաղերը ոսկեայ շրջանակի պէս պարփակում էին նրա դժգոյն դէմքի չքնաղ ձուաձեւը։ Նրա ուղեկիցը աւելի պարզ ու հասարակ էր հագնուած. անշուշտ՝ դա նրա ծառայն էր։ Նա միանգամից հիացնում էր իւր տիպական արտաքինով. և չնայած իւր սև զգեստին՝ կարծես փայլում էր մի ներքին բերկրութեամբ։

Իմ լսած ձայնը առաջ էր գալիս սև փետուրներից կազմուած մի ահագին հովհարի ճօճումից. մատաղ տիկինը շիրմի մօտ նստած հովհարը անդադար և միակերպ ճօճում էր. կարծես ուզում էր զովացնել նրան, որ հանգչում էր թարմ հողաբլրի տակ։

Թէպէտ ես զարմանալու սովորութիւն չունիմ, բայց այդ օտարոտի տեսարանը խորին զարմանք պատճառեց ինձ։ Ինչու՞ համար է այդ հովհարը։ Ի՞նչ է նշանակում այդ անտարբեր խնամատարութիւնը, այդ յետ-մահուան ուշադրութիւնը։

Ցարպանրով մօտեցայ տիկնոջը, լիովին հասկանալով վարմունքիս անհամեստութիւնը, սակայն զրգռած մի անյաղթելի հետաքրքրութիւնից, որ ստիպում էր բոլոր պայմանական պատշաճի ձևերը արհամարհել։

Գլխարկս վերցնելով, խոնարհ ողջոյնի թեքուեցայ և՝ զողզողալով սեպհական վստահութիւնից, ասացի.

«Տիրուհի, կարող եմ արդեօք հարցնել, թէ ինչ խորհրդաւոր պատճառներն են ստիպում ձեզ հովհարել այդ շիրիմը։ Աղաչում եմ, ներեցէք իմ անտեղի հետաքրքրութիւնը։ Սակայն՝ տեսնում էք, որ ես արհեստով իմաստասէր եմ, սովոր եմ իրերի էութիւնը թափանցել. և խոստովանում եմ, այն զրաղմունքը, որին անձնատուր էք եղել, միանգամայն խախտում է իմ բոլոր ենթադրութիւնները»։

Մատաղ տիկինը ինձ վրայ դարձրեց իւր զարմացած հայացքը, շառագունեց և ոչինչ պատասխան չտալով, շարունակեց իւր զբաղմունքը աւելի արագ և տենդային շարժումներով։ Այդպիսի մի ընդունելութիւն առանձին կերպով շղարսացրեց ինձ։ Ես նախատեսել էի այդ. և՝ արժանի դաս ստանալով՝ ինձնից միայն կարող էի նեղանալ։

Այնու ամենայնիւ այն գաղտնապահութիւնը կրկնապատկեց իմ հատաքրքրութիւնը։ Այդ խորհրդաւոր գաղտնիքի խորքը թափանցելու ցանկութիւնը իմ մէջ մի հիւանդոտ զգացում, մի անողոք պահանջ էր դարձել, որին գոհացում պէտք էր տալ՝ ինչպէս որ լինէր։ Ես շարունակեցի պնդել.

«Տիրուհի, տիրուհի... Աղաչում եմ ձեզ։ Այնպէս ցանկանում եմ իմանալ։

Այս անգամ անծանօթ տիկինը երեսը շրջեց, թիկունքն ինձ արաւ. մի վայրկեան անգամ չէր թողնում իւր պարզամունքը, այլ շարունակում էր մուրանդուեցամբ։ Անմտութիւն էր իմ կողմից այլ ևս յամառել... Որքան ցաւալի է։ Ես այսպէս ինձ չէր թոյլ տուած այս զաղանիքը լուծելու բանալին գտնել։ Բայց յանկարծ նկատեցի, որ մի քանի քայլ ինձնից հեռու կանգնած է տիկնոջ ուղեկիցը՝ չարաճճի ժպիտը դէմքին։ Գրըպանիցս հանդարտ հանեցի մի կապոյտ թուղթ, ցոյց տուի նրան, խորհրդաւոր կերպով աչքով արի և սկսեցի յամը յամը քայլերով իջնել ծառուղիով՝ դէպի վար։

Ինչպէս էլ սպասում էի, դիտ մի քանի քայլ չէի արել, երբ նա ինձ հասաւ։

—Պարոն, ասաց մեզմ ձայնով, ես այն տիկնոջ ադախին եմ, որ չկամեցաւ ձեզ պատասխանել։ Որքան իմացայ, դուք ուզում էք գիտենալ, թէ ինչու իմ տիրուհին հովհարում է այն շիրիմին։ Ես ձեր յետևից եկայ, պատճառ բռնելով, թէ ձիերին հարկաւոր է նայել։

—Դու հրաշալի աղջիկ ես, ասացի ես և նրա բուռը ճմռեցի խոստացած կապոյտ թղթադրամը. զէ՛հ, պատմիր շուտով, ինչ որ քեզ յայտնի է։

—Քայլեցէք ուրեմն։ Իմ տիրուհին՝ մարքիզուհի դը - Նուարմոն՝ ծերունի մարքիզ Նուարմոնի այրին է, որ ճեմարանի անդամ էր և մեռաւ ինչպէս ձեզ յայտնի է՝ երկու շաբաթ առաջ։

—Չնայած տարիքների ահագին տարբերութեանը իմ տիրուհին միշտ ամենաօրինակելի ամուսին է եղել. մարդու հիւանդութեան ժամանակ՝ երկար ամիսների ընթացքում նա մի բոպէ անգամ չէր հեռանում պարոնի մօտից, և հեռանում էր նրան որդիական անձնուիրութեամբ։ Երբ մարքիզ դը-Նուարմոնը մահուան ժամն զգաց, բռնեց իւր հեծեծող կնոջ ձեռքը և ասաց.

«Ի՞նչ հարկ յուսահատուելու, սիրելի ամուսին։ Դուք դեռ այնպէս չահէլ, այնպէս գեղեցիկ էք. կեանքը դեռ շատ երջանիկ ժամեր է խոստանում ձեզ. իսկ ժամանակը ամենալաւ բժիշկն է։ Դուք շուտ կըմոռանաք ինձ։»

Մարքիզուհին զայրոյթով բողոքեց։ Նա երբէք չի կարող իւր ցաւը մոռանալ։ Նա երդւում էր, թէ ամուսնու հետ պէտք է գերեզման մտնի։

«Այդպիսի երդումներն աւելորդ են, ազնիւ ընկեր. այդ սրբութիւնը հայհոյել կընշանակի։ Դուք դեռ երկար, շա՜տ երկար կապրիք և երջանիկ կըլինիք։

—Ցամենայն դէպս ես կարող եմ երդուել, որ երբէք ուրիշի ամուսին չեմ լինիլ։ Թոյլ տուէք ինձ այս երդումը։

—Ո՛չ, ես համաձայն չեմ այդպիսի երդում ես ընդունելու, պատասխանեց ծերունին։ Կարելի է միթէ երբևիցէ երաշխաւոր լինել ապագայի համար։ Խոհեմութիւն է միթէ կեանքն ընդ միշտ երդումով կաշկանդել։

«Հապա ուրեմն թոյլ տուէք ինձ երդուել՝ ձեր յիշատակին հաւատարիմ մընալու գէթ տասը տարի։ Այո՛, տասը տարի, այդ շատ չի լինիլ, տասը տարին ես ամբողջապէս ձեր յիշատակին կը նուիրեմ։

—Տասը տարի՞, այդ չափազանց է։ Ո՛չ, սիրելիս, ես այդքան շատ չեմ պահանջիլ ձեզնից։ Բայց եթէ դուք պնդում էք... ուրեմն խոստացէք միայն չմոռանալ ինձ... մինչև որ գերեզմանիս հողը չորանայ։

Մարքիզուհին հանդիսաւոր կերպով ուխտեց այդ. և բարի մարքիզը խաղաղ սրտով հանգստացաւ յաւիտենական քընով։ Մարքիզուհու յուսահատութիւնը սահման չունէր։ Մենք երկիւղ էինք կըրում, թէ նա կարող է խելքը կորցնել։ Եւ այդ անտանելի վիշտն ուժգին տպաւորութիւն թողեց պ. Բալլերուայի վրայ, որ հանգուցեալ մարքիզի երիտասարդ քարտուղարն էր։ Եւ նա ամեն ջանք գործ դրեց, որ դժբաղդ այրուն մխիթարէ։ Նա տիկնոջ հետ շատ խօսեց իւր հանգուցեալ խնամատարի մասին, բայց աւելի ևս շատ՝ հէնց իւր անձի մասին և համոզեց մարքիզուհուն, թէ նա բոլորովին իրաւունք չունի կեանքի վայելքներից հրաժարուելու։ Պարոն Բալլերուան մարքիզուհու հոգու մէջ լաւ օրերի յոյսը վառեց։ Նա պերճախօս է, համոզող, և որովհետև ըստ ամենայնի բարեկիրթ մարդ է, ուստի իւր կալուածները գընաց, խոստանալով մի քանի օրից վերադառնալ։

Եւ ահա իմ տիրուհին օգուտ է քաղում նրա բացակայութիւնից, որ շուտով չորացնի հանգուցեալ մարքիզի գերեզմանի հողը։ Պ. Բալլերուան շուտով պիտի վերադառնայ. իսկ մարքիզուհին ոչ մի պայմանով չէր կամենալ իւր ուխտը դրժել. այն ուխտը, որ իւր ամուսնու առջև հաստատեց։

Վերջացնելով այդ պատմութիւնը՝ նաժիշտը արագութեամբ հեռացաւ։ Իսկ ես դեռ երկար կանգնեցի, մտածմունքներին անձնատուր եղած. այն ինչ հեռուից թուչում, ինձ էր հասնում թըռչունների թեերի շարժման նման մեղմ սօսափիւնի ձայնը։ Այդ՝ անհամբեր մարքիզուհու հովհարն էր, որ շարժում էր սիրելի ամուսնու շիրիմի վրայ։

թիւնը ցոյց է տալիս որ տակն ու վրայ է եղել ամեն ինչ, քանդուած են կայարաններ, կարտուած են բոլոր հեռագրաթելերը, պահակատներ, ճանապարհի թէ հողային մասը և թէ բէյսերը կուլ են գնացել հեղեղի կատաղութեան, քանդուած են ճանապարհի հողային մասերը պահպանող ամագին հաստ պատերը և բազմաթիւ մանր կամուրջներ։ Ձերուելի կայարանից քիչ հեռու երկաթէ կամուրջը կիսովին խորտակուել է, երկու թեերը բոլորովին կործանուած են, իսկ երեք սիւները ծռուած։ Ջուրը սկսած Ջորաբանից մինչև Աջամէթի և դէպի Բօրժոմ լճացած է շատ տեղերում և իր տակն է թողել երկաթուղու գիծը, շինութիւններ, գիւղեր, ամառանոցներ։ Ջուրը այնքան մեծ է և այնպէս է կրծել ճանապարհները որ երկաթուղու պաշտօնեաները հնար չունին նկարագրելու ընդհանուր աւերածը և միևնոյն ժամանակ անձրևները դեռ շարունակ տեղում են և դժուարացնում նորոգման գործը։ Նոյեմբերի 1-ից հեռագիրը հաղորդեց որ հեղեղը քշել է Աջամէթի երկաթեայ կամուրջը և Կվիրիլի մեծ կամուրջի տասը սիւները։ Նոյեմբերի 1-ին Թիֆլիզի նահանգապետ իշխան Ճերվաշիձէն, նահանգական ինժինէր պ. Բուկեվիչի հետ ուղևորուեց Գօրի, ուր հեղեղը նոյնպէս անբնական աւերածներ է արել։ Գօրիից հասած հեռագրական լուրերը և թղթակցութիւնները տեղեկացնում են որ գրեթէ ամբողջ քաղաքը աւերվում է։ Ջրի տակ են գօրանոցները, բանտը, քաղաքային այգին, աւերուած տների թիւը 200-ից անցնում է, մնացեալներին վտանգ է սպառնում։ Լիախվայի բոլոր կամուրջները քշել է հեղեղը։ Գօրիի գլխաւոր կամուրջը Քուի վրայ հազիւ հաղ է դիմանում ջրի կատաղութեան։ Գօրիի շրջակայ գիւղերը մնացել են ջրի տակ, բայց բնակիչներն ազատուել են։ Անձրևը շարունակ գալիս է և ոչ մի հնար չկայ այդ բնական կործանիչ այժի դէմ մրցելու։

Այդ հեղեղները իրենց ազդեցութիւնն ունեցան նաև Թիֆլիզի վրայ։ Քուռ գետը վարարելով դուրս եկաւ ափերից և ծածկեց «Սաղ» կոչուած թաղի մի քանի տները և ափում աւերումներ գործեց։ Տեղական վարչական և զինուորական իշխանութեան կարգադրութեամբ կօղակ զինուորներ հասան «Սաղի» բնակիչների օգնութեան։

Ճանապարհների հաղորդակցութեան ընդհատումը և վերանորոգուելու ժամանակամիջոցի անորոշութիւնը ծանր վրնասներ կը պատճառէ Բաքուի նաւթային արդիւնաբերութեան գործին։

Այստեղ աւելորդ չենք համարում առաջ բերել ականատես լուսանկար պ. Եդուարդ Կլարի նկարագրութիւնը, որ տպագրուած է «Տիֆլ. Լիստ.» լրագրում։ Պ. Կլարին հրաւիրել է Կովկասեան երկաթուղու վարչութիւնը կառավարչի հետ միասին գնալ և հանել աւերուած կէտերի լուսանկարները։

«Հոկտեմբերի 29 երեկոյեան—գրում է պ. Կլարը—մենք մտանք Սուրամի թունէլը, բայց այդ թունէլի վերջում մի պայթիւն կանգնեցրաւ գնացքը. դուրս եկաւ որ թունէլի ելքը ծածկուած է իրար վրայ դիզուած վագոններով։ Եկսպեդիցիայի անդամներն իջան վագոններից և անցան ոտով Ջահերի ֆանտաստիկական լուսով որոշելով ճանապարհը. այդպէս ոտով գնացինք մինչև Ցիպա կայարանը։ Սաստիկ խաւար էր, բայց Ջահերի լոյսով հնարաւոր էր լինում տեսնել սոսկալի աւերածի պատկերը, որի նմանը երբէք չենք տեսել... Ցիպա կայարանում յայտնեցին, որ ճանապարհն այլ ևս շարունակել անհնարին է, վտանգաւոր է։ Հարկ եղաւ Ջահերով և լապտերներով կրկին յետ դառնալ մինչև Սուրամի թունէլը, որտեղ մեզ սպասում էր գնացքը։ Իսկ անձրևը շարունակ տեղում է և տեղում, երբեմն սաստկանալով, երբեմն քարոզելով։ Նոյն գնացքով ստիպուած յետ եկանք Միխայլովո կայարան գիշերելու։ Հետեւեալ օրը ժամը 7-ին, էքսպեդիցիան նորից առաջ գնաց դէպի Սուրամի անցքը։ Անձրևը շարունակ թափվում էր։ Թունէլից դուրս եկանք և իսկոյն դեռ մի քանի տասնեակ քայլ շարած պատահեցինք ճանապարհի աւերածներին։ Մի քիչ հեռուն հետեւեալ պատկերն է երեւում. լեռնից հեղեղը որոտալով սլանում է, նա սրբել քշել է ճանապարհը, իրեն համար խոր անցք է բացել և րէյսերը մնացել են օդի մէջ կախուած, կարծես ցանց լինին կամ սանդուղքներ. քիչ հեռուն կրկին և կրկին աւերածներ։ Պ. Վիդենիեվին՝ իր հետ վերցրած թուով 200 գործաւորները սկսեցին աշխատել փոխել ջրի ճանապարհը, բայց ո՞ւր... ինչ կարող են անել երկու հարիւր մարդիկ բնութեան այդ սոսկալի կատաղութեան դէմ։ Ոչ թէ 200, այլ եթէ 2000 հոգի լինէին, էլի անհնարին էր կանգնեցնել հեղեղի կործանիչ յորձանքը Սուրամի թունէլի մի անկիւնը Ցիպայի կողմից քշել է հեղեղը։ Թունէլի մուտքի մօտ լեռան լանջի վրայի գիւղը հիմքից աւերուած է. ջուրը քշել է ամենը. գերեզմանատունը քանդուել է, խաչքարեր և տապանաքարեր անհետացել են, գերեզմանների թումբերը հողին են հաւասարուել։ Ցիպայի կամուրջը հեղեղատը քշել է։

Ցիպայի մօտ յորձանոց հեղեղի յորձանքները լեռներից այս ու այն կողմից խուժում են, խանդում իրար և միմեանց զարկում աւերած ըէյսերի կտորներն ուքարերը, որոնք լեռան պէս կուտվում են և ցրվում։

Մալիթի ճանապարհին, նոյն իսկ Մալիթի մօտ մեր աչքի առաջ հեղեղի ալիքները աւերում են գիւղերը... Տները, խրճիթները տաշեղի նման քշվում էին հեղեղից։ Խ՚ղճ ազգաբնակութիւն. . . ճանապարհին, չնայելով շարունակ տեղացող անձրևին, մեզ պատահում էին գիւղացիներ իրենց անային իրեղէններով... Նրանք փրկվում էին և գնում, բայց ո՞ւր, իրենք էլ չգիտէին։ Նրանց միակ հարստութիւնը — անասունները, տաւարը կորած է, արդէն սերմած դաշտերը փչացան, ամբողջ կալուածքը կորաւ... Բառի բուն նշանակութեամբ ամենքը մնացել են անտուն, անհաց։ Սարատովը դրանց մէջ սոսկալի է։ Կայարաններում ուտելիքի պաշարը պակաս է։ 28-ի և 29-ի դժբաղդութիւնը կատարեալ աղէտ է։ Ճանապարհն անկասկած մեծ կորուստ ունի, մնասը շատ միլիոններով է հաշուվում. բայց աւելի ծանր է ժողովրդի կրած մնասը։ Շատ երկար, մի քանի տասնեակ տարիներ կուզէ, որ գիւղացիք իրենց տնտեսութիւնը նորոգեն։ Նրանք բառի բուն նշանակութեամբ մուրացկանի վիճակում են։ Իմ կարծիքով անհրաժեշտ է վարչական օժանդակութիւն։

Ճանապարհին այստեղ, այնտեղ, երեւում են մենակ կանգնած վագոններ. չէ հասկացվում, թէ նրանք գնացքից պոկուել, յետ են մնացել, թէ հողմն է քշել։ Տեսայ և խորտակուած ապրանքատար գնացքը. տարօրինակ է նրա տեսքը։ Գլխի և պոչի մասերը ջրի մէջ են, իսկ ծռուած մէջքը կղզի վրայ երեում է։ 9 սաժէնանոց քարեայ և ցեմենտով շինած պատի հետքը չէ մնացել։ Մալիթայի կամուրջը կործանուած է։ Ջրի այժն այնքան մեծ էր, որ հարիւրաւոր փութանոց ծանրութեամբ կամուրջի երկաթի կտորները արագութեամբ այնպէս էին սլանում, որ կարծես թէ լողում էին ջրի երեսին։ Մալիթի կայարանի մօտ մարդու ուշադրութիւնը գրաւում է «օդային երկաթուղին» անդունդի վրայ, որի խորքում մնչում է հեղեղատը։

Այս շորրորդ տեսարանը ևս նկարելով, այլևս անկարող եմ շարունակել։ Ամենքս թրջուած ենք մինչև ոսկորները. մի շոր թեել չկայ վրաներս. Ջուրը լցուել է մեր կօշիկների և կրկնակօշիկների մէջ։ Ցրտից դողում ենք. իսկ անձրևը շարունակ տեղում է։

Մալիթից էքսպեդիցիան ուղղուեց դէպի «Գօսրդ մօսա» (ծուռ կամուրջ)։ Ճշմարիտ մեծ արիութիւն էր հարկաւոր այդ մռնչացող, մնչացող, վշշող հեղեղատներով, այդ «օդային ճանապարհներով» անցնելու համար, իջնել ձորը, բարձրանալ ոտիդ տակից փախչող սահող քարերով... Մի կերպ հասանք մինչև Ծուռ կամուրջը և կմ։ Այլ ևս ոչ քաջութիւնը, ոչ համարձակութիւնը ոչինչ չեն կարող անել։ Ծուռ կամուրջի մօտ ահագին հեղեղատը փակել է ճանապարհը։ Կամուրջը նոյնպէս վնասուած է։ Հարկ եղաւ յետ դառնալ և կրկին տեսնել աւերածի սոսկալի պատկերը, որ վերադարձի ժամանակ աւելի սխրալի էր, որովհետև կարճ կամանակամիջոցում աւերածը մեծացել էր։ Մինչև որ ջուրը չիջնի և անձրևները չդադարին, բոլորովին մտածել անգամ չէ կարելի իմանալ, թէ ինչ է արել բնութիւնը։ Անձրևի տակ հասանք մինչև թունէլի և այդտեղ իմացանք, որ թունէլի և Միխայլովոյի մէջ յարաբերութիւնները կարուած են։ «Վարվարինի» կամուրջը նասել է։ Գործաւորներն սկսեցին բողոքել և խնդրել յետ ուղարկել իրենց—ինչ անեմ, պատասխանեց Վիդենիեվը—ինչով ուղարկեմ ձեզ. եկէք միասին զընանք ոտով. այդ միջոցին լուր եկաւ, թէ գուցէ կարելի լինի մի կերպ անցնել կամուրջից։ Ամենքս թրջուած, տանջուած, հասանք Թիֆլիզ հոկտեմբերի 31-ի գիշերը։ Մուռացայ հեղեղի պատճառն ասել։ Տեղացիք ասում են, որ ամսի 26—27 Իմերէթի լեռներում ահագին ձիւն է եկել և ապա տաք քամի փչել։ Ձիւնն սկսել է հալուել և մի կողմից էլ անձրև տեղալ ուշքի ահագին ծովը սկսել է հոսալ լեռներից և ծածկել երկաթուղու գիծը և շրջակայքը։ Միայն անձրևն առանց արագ հալուող ձիւնի չէր կարող այդպիսի կործանիչ այժ ունենալ, որի նկարագրութիւնը իմ թոյլ գրիչը չէ կարող անել։

*
* *

Տեղական իշխանութիւնը, ինչպէս հաղորդում է «Տիֆլ. Լիստոկը», մի շատ ազնիւ կարգադրութիւն է արել, այն է հրամայել է անցագիր չպահանջել այնտանկահպատակ հայերից, որոնք փախել են Թուսատան վերջին կոտորածներից յետոյ։ Այդ կարգադրութիւնը շատ հասկանալի է և բնական մի քրիստոնեայ կառավարութեան մէջ, ուր նոյն քրիստոնէական հովանաւորութիւնը պիտի վայելեն անշուշտ նաև և վերջին կոտորածներից առաջ փախչողները։

*
* *

«Նովոստին» հաղորդում է թէ Կովկասում աւազակութիւնները զսպելու համար ենթադրութիւն կայ զօրքերի օգնութեամբ խստիւ հետամուտ լինել աւազակային խմբերին։ Վճռուած է սահման անցողներին արգելք լինելու համար սահմանապահների օգնութեան զինուորներ ուղարկել։

*
* *

Կ. Պօլսի լրագրները հաղորդում են՝ որ Թիֆլիզի տաճկական փոխ-հիւպատոս է նշանակուած Իսակ-Եաֆէտ էֆէնտին, որ առաջ նոյն պաշտօնով Գօրֆու էր գտնվում։

*
* *

ՂՈՒԲԱ, 28 հոկտ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Մօտ անցեալում այստեղ պատահած մի դէպք մի անգամ ևս ապացուցեց, որ թուրք տարրը, երբ նորա վրէժխնդրութեան բաժին արդէն լցվում է, խղճութիւն ունել չգիտէ իւր զոհի նկատմամբ, ընդունութիւն անել չգիտէ իւր վրիժառութեան տեղի վերաբերմամբ. նորա աչքերը փակվում են թէ խղճի, թէ հասարակական դատաստանի և թէ տէրութեան օրէնաց առաջ. նա միայն սընվում, ապրում է իւր մէջ զարթած վրէժխնդրութեան այդ օր աւուր զօրացող ու աճող զգացմունքին լիովի սնունդ մատակարարելով, որքան էլ նորա կրած վիրաւորանքը իւր ճնամուրը, «փափախը» ցեխի մէջ թաթախելուց, գետնի հետ հաւասարելուց հեռու լինի. նա կը մեռնի, նա պատրաստ է տաժանակիր աշխատանքի, յաւիտենական բանտարգելութեան՝ միայն թէ «իւր ասածն անէ», իւր ամբողջ գոյութիւնը կրծող այդ շարանենգ որդին լիովի յագուրդ տայ։

Անցեալ շաբաթ օրը, ամսոյս 21-ին, երեկոյեան մօտաւորապէս ժամի 9-ին քաղաքիս ոստիկան Միրզա-Իսուֆ Քերիմովը իւր օգնական Վալիեվի հետ նըստած է լինում քաղաքի գլխաւոր փողոցի (Бульварная улица) վրայ գտնուող պ. Բհերամովի գինետունը (рейнсковой погребъ), ուր լինում են խմելի ծառայող Ս. Ջիջիանցն իր եղբօր հետ և մի քանի ուրիշ հայ և թուրք պատուաւոր անձնաւորութիւններ. իսկ փողոցում, կիրակնամուտ երեկոյ լինելուն պատճառով, ահագին բազմութիւն էր խռնուած, մանաւանդ որ յիշեալ փողոցը քաղաքի համարեա միակ բաբախող սիրտն է, ուր հասարակութիւնը ցերեկուայ աշխատանքից յետոյ՝ դուրս է գալիս փորը ինչ ազատ շունչ քաշելու։ Ահա երեկոյեան այդ պահին յիշեալ խանութին է մտնում մեծամարգարէի անհարազատ և անհաւասարիմ զաւակներից մէկը՝ կռնծաբանող մանրավաճառ թուրք Հաշիմը. ներս մտնելուն պէս, ներկայ եղողներին և ոչ իսկ մի հարեանցի ակնարկի անգամ արժանացնելու՝ դիմում է ուղղակի ոստիկան պ. Քերիմովին և յայտնի տրակալ հոգւով և սպառնալիքներով սկսում հաշիւ պահանջել մօտիկ անցեալում իւր խանութում պատահած մի ինչ որ դէպքի վերաբերմամբ. թէ ինչու անցեալ օրը, երբ ինքը խանութում կռվում էր իւր եղբօր հետ, նա չի միջամտել, գուցէ այնտեղ «արիւն էր լինում» և այլն։ Ապա ամենատրոցային և լիովի բառերով հայհոյելուց յետոյ՝ հանում է տարմանակը և պարզում ուղիղ պ. ոստիկանի կրծքին. սակայն վերջինս յաջողվում է խոյս տալ հարուածից մի կողմ թեքուելով և գնդակը ցցվում է պատի մէջ։ Սինդեռ չարագործը պատրաստվում էր երկրորդ անգամ ատրճանակը պարպել՝ մի երկու մարդ կարողանում են ոստիկանին մացնել ներսի սենեակները, իսկ մնացեալները գլուխները կորցրած՝ փախչում են դէպի փողոց, որտեղ թը-ռում և օգնական Վալիեվն ու խանութպան եղբայրները, այնպէս որ խանութում մնում է միայն չարագործ թուրքը ատրճանակը ձեռին՝ համարձակ, խանութը չափելիս մի անկիւնից դէպի միւսը։ Ամբողջ 10—15 րոպէից յետոյ միայն իւր մարդկանցից մէկին յաջողվում է համոզել չարագործին և քարշ տալ իւր տունը, ուր և ձերբակալվում է. սակայն չի մոռանում գնալուց առաջ մի վերջին սպառնալիք ևս տալ թէ՝ «այսօր չիղաւ, վաղը կը լինի»։ Իսկոյն չարագործութեան տեղն են հասնում պ. գաւառապետը և այլ բարձրաստիճան անձինք. հրաւիրվում է քաղաքային քննիչ պ. Զահ-Ազիզը, որ տեղն ու տեղը քննում է դէպքը. բոլոր վկաներն անխիր, դեռ թարմ և սարսեցուցիչ տպաւորութեան տակ, ճիշդ ցուցմունքներ են տալիս ի նպաստ ոստիկանի. միայն չարագործն ասում է, որ արել է այդ բոլորը անգիտակցարար՝ գտնուելով Բաքոսի գերիշխանութեան տակ, դժուելով մեծ-մարգարէի անմման պատուէրը։ Ոստիկանի օգնական Վալիեվն պ. գաւառապետն իսկոյն հրամայում է վերցնել ուսադիրները։ Չարագործը մօտ 40 տարեկան մարդ է և ներկայումս գտնվում է քաղաքի նոր բանտում։

Պ. Քերիմովի կեանքի դէմ եղած սպանութեան այս փորձը բացադրում են մի քանի օր առաջ քաղաքումս տարածուած լուրի մեկնութեամբ, որ իբր թէ նահանգական իշխանութիւնից առաջարկ է եղել սորան հրաժարական ներկայացնել իւր պաշտօնից, և ահա հին հաշիւներ ունեցողները՝ յարմար առիթից օգտուելով՝ շտապել են իրենց «այրուած կաշին սաղացնել»։ Եւ արդարև այդ լուրը տարածուելուն պէս քաղաքումս ընկուեցան յաճախակի կրկնուել դարձեալ ամենատեսակ գողութիւններ ու աւարառութիւններ, որ երկար ժամանակ տեղի չէին ունենում, շնորհիւ պ. ոստիկանի աչալուրջ հսկողութեան ու ծայրաստիճան խստութեան։

Թափառական։

*
* *

Կայսերական աշխարհագրական Ընկերութեան Կովկասի ճիւղի անդամների այսօրուայ ընդհանուր ժողովի նիստին ի միջի այլոց պ. Կուլբերգը կը զեկուցանէ Լօնդօնի աշխարհագրական կօնգրէսի որոշումները, իսկ պ. Կոնդրատենկոն Անդրկովկասի նահանգց ազգագրական քարտէզների մասին։

Նիստը տեղի կունենայ գլխաւոր շտաբի դահլիճում, երեկոյեան 8 ժամին։ Իրաւունք ունին ներկայ լինել նաև օտար անձինք։

*
* *

1896 թուականից սկսած Պետերբուրգում պիտի հրատարակուի ռուսերէն լեզուով զինուորական լրագիր «Սլօվօ» անունով։

*
* *

ՆՈՒԽՈՒՅ մեզ գրում են. — Տղայոց գպրոցի շինութեան գործը յաջող կերպով առաջ է գնում։ Շինութիւնը 20-25 հազար ծախք է պահանջում։ Նայելով եղած ջանքերին, կարելի է ասել, որ մի տարուց յետոյ տղայոց գպրոցը մի ընդարձակ շինութիւն կունենայ ըստ աննկայնի յարմար արդի մանկավարժական պահանջներին։

*
* *

Մեզ հաղորդում են.—«Նոր-Դար» լրագրի խմբագիրը որոշել էր ասպարիզից հեռանալ և խմբագրութիւնը յանձնել պ. Մինաս Բերբերեանին. նա դիմել էր պատշաճաւոր իշխանութեան և վերացուն ստացել։ Սակայն պ. Բերբերեանը տեսնելով, որ իրեն առաջարկուած պայմաններով չի կարելի թերթը իւր ընկած դրութիւնից բարձրացնել, հրաժարուել է լրագրի ժամանակաւոր խմբագրութիւնը յանձն առնելուց։ Այս լուրը շատ ցաւ է պատճառել լրագրական գործի համակրողներին»։

ՆՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

22 հոկտ.

Յարդ Պօլսոյ պաշտօնական և դիւանագիտական շրջաններու մէջ տեղի ունեցող անցքերու լուրեր Եւրոպա և ձեզի աւելի շուտ կը հասնէին քան հոս պօլսեցիներուս. սակայն այժմ այնքան արագ կը յաջորդեն իրար դէպքեր, որ այլևս անոնց ծածկելու հնարը չունի ոչ պալատը, ոչ Դուռը։ Պալատի մէջ չվստահութիւնը իր ծայրայեղութեան հասած է. պալատական պաշտօնայք սունկի պէս կը բրուսնին և ստուերի նման կ՚անհետանան։ Ամեն լուր փողոցն է, ամեն տեղեկութիւն հրապարակն է և ոչ միայն քրիստոնեաներու այլ և տաճիկներու բերանը։ Ժողովուրդն ամեն օր կը տեսնէ թէ ինչպէս դեսպան միասին կամ առանձին առանձին պալատ կերթան ու կ՚ուղան։ Զինուորականներու մէջ շշուկ մը կայ և չարաղուշակ շշուկ. ոստիկանք գլուխնին կորսնցուցած են, ընելիքնին չեն գիտեր, ժողովրդին բարեկամութիւնը փնտռել սկըսած են. տեսակ մը չտեսնուած բարութիւն եկեր է վրանին։ Խնդալս կուգայ ասոր տողերը գրելուս, երբ կը լսեմ մեր ոստիկաններու այժմեան դէմքեր ու անոնց արտայայտութիւն։ «Էֆէնդիմ, քէֆքն նասըլ դըր», այսօր ինձ մի առանձին քաղաքաւարութեամբ հարցուց մեր թաղի ոստիկանը, որ ուրիշ 6 ամիս է հոս չէր խօսեր և մէյ մը վրաս ալ չէր նայեր։ Դրացիս կըսնդուէր որ «գործերը գնչցան»։ Խօսելու ատեն խիստ արագ լորձունքը կը ղլէր. տեսայ որ հարցնել կուզէր, թէ «աս ինչէ՞ն է որտանիկը քաղցի չի գիմանար»։ Քովէս անցնող սիմիդ ծախողէն հատ մը առի և սկսայ ուտել ու տաճիկին ալ ըսի թէ շատ ադէկ է, հատ մը՞ն ալ թող ինքն առնէ, բայց սիմիդ ծախողն արդէն հեռացած էր։ Այսօր քիչ մը լաւ է տրամադրութիւնս, ուստի ուզեցայ օգտուիլ ադէկ և ցուցնել Ձեզ թէ ինչ վիճակի մէջ են Պօսպ ոստիկանք։ Ան է Կ. Պօլսոյ արդի փողոցը. իսկ հոս փողոցը, բան մը՞ն է։ Ներսը նայինք։

Ազգային պատրիարքարանն ամեն օր խաւն ժողով կը գումարուի և Ամեն. Սրբազան Պատրիարք կ՚գործէ բազմապատկեալ բուռն եռանդամբ։ Ծանուցագիրը արդէն մատուցուեցաւ բոլոր դեսպանաց և կերևի որ ըրած են իրենց ազդեցութիւն։ Սրբազան Պատրիարքին իրենց սէրը յայտնելու առիթն եկաւ Պօլսոյ հայերուն և եւրոպացիներուն։ Ամսոյս 21-ին նորին Սրբազնութեան ծանխմբութիւնը ըլլալով ժողովուրդը ցուցուց թէ սրբան կը սիրէ իր ազնիւ Պատրիարքը. Կրօնական, բարպական ժողովոյ անդամք, կրօնականք և աշխարհականք, հայք, յոյնք և եւրոպացիք կը փութային համբուրել Սրբազան Պատրիարքի աջ և երկար կեանք մաղթել անոր։ Գաւառական քաղաքներէ հեռագրեր տեղացին պատրիարքարան և ամենուն մէջ «սէր» և «հաւատարմութիւն» բառերը կը լսես թէ ընդհանուր զգացումէ մը կարտայայտուի։

Դեսպանական ժողովներ ևս գրեթէ ամեն օր տեղի կ՚ունենան։ Ցանցիկ կառավարութիւն չի կրնար հասկնալ, թէ ինչու եւրոպական դեսպանք այժմ յաճախ պահանջուելով պատյաներ կընեն դէպի Պօլիս. լրտեսներուն ալ չի հաւատար, չիտէ ինչ ընէ։ Սուլթանի հրամանով Սէֆճատէ Պաշի Իզզէթ-պէյ սէլամլիքի ատեն ուրբաթ օր գնաց Քիւչիւկ Այա Սօֆիայի, Սարիւլտպիսի սէտրէներն ու Սիրքէջիի թէկիէները և զրահական պարկներ ու ոչխարներ բաժնեց սօֆիներուն, խնդրելով որ անոնք «բարեմաղթութիւններ» ընեն վեհափառ սուլթանին կենաց համար։ Անոնք ալ ըրեր են, ալէկ մը՞ն ալ բարեմաղթեր են Իզզէթ բէյի հօր հոգուն հայրն ասանկ բաներ։ Զարժումներին ժամանակ սպանուած Սերվէթ պէյի ընտանիքն ալ արժանացաւ սուլթանի ողորմութեան որ իրագէպ մը հրամայեր է 5000 գուռշ նուէր տալ «նահատակի» ընտանիքին։

Ամսոյս 20-ին Պատրիարքական գերապատիւ փոխանորդը ռուսական դեսպանատունը գնաց և ներկայ գտնուեցաւ հանդուցեալ Աղեքսանդր Գ Կայսեր մահուան տարեդարձի առթիւ կատարուած հոգեհանդիսին։ Սրբազան Պատրիարքը հետեւեալ օրը ևս ուղարկեց իր փոխանորդին ռուսական դեսպանատուն ներկայ լինելու մատրան մէջ կատարուած զոհաբանական մաղթանաց Ռուսիոյ Նիքոլա Բ Կայսեր գահակալութեան տարեդարձին առթիւ։ Ամենապատիւ փոխանորդը աղօթքէն վերջը այցելեց դեսպանին և պ. Նելիդոֆին անձամբ շնորհաւորեց։ Պ. Նելիդոֆը սիրալիր ընդունեց և խնդրից իր շնորհակալիքը և բարիները հաղորդել Նորին Սրբազնութիւն Պատրիարքին։ Վ. Ե.

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՂԶՈՒԱՆ

(«Արձագանք»-ի հեռագիր *)

—

Ամսոյս 18-ից մինչև 22-ը հետեւեալ զարհուրելի կոտորածներն են տեղի ունեցել Երզրումում և շրջակայքում։ Ամսոյս 18-ին կէսօրից մի ժամ անցած Երզրումում յանկարծ հնչեցին զինուորական փողերը և մի ակնթարթում հայերի թաղերը լցուեցան 2000-ից աւելի տաճիկ զինուորներ ոտից գլուխ զինուած։ Սոսկալի հրացանաձգութեամբ զինուորները հարձակուեցին հայերի տների վրայ, կոտորում էին ամենքին և քանդում տները. փշրեցին և կողոպտեցին խանութները, գրասենեակները, քիօսկները։ Ամենամեծ բարբարոսութիւնները կատարուեցին Ամմէյդանի, Թօփհանէ թաղերում և մաքսատան մօտ։ Ազատ մնացին Սանասարեան վարժարանը և եկեղեցու մօտ գտնուած մի քանի տներ։ Հայերը սարսափից գլխները կորցրած փախչում էին կտուրների վրայով. շատերը չվստահութիւնից և ահից կտուրներից վայր էին թափվում և փողոցում զոհ գնում տաճիկ զինուորների սրերին և գնդակներին։ Աւելի քան 350 հոգի ապատան են գտել անգլիական հիւպատոսարանում. Հնայելով հիւպատոսի զաւակների հիւանդութեան, հիւպատոսի կինը իր տան բոլոր սենեակները բացաւ ապաստանուածների համար՝ իր զաւակներին փոխադրելով մի փոքր սենեակ։ Բազմաթիւ հայեր ապաստանուեցին պարսից հիւպատոսարանում։ Պարսից հիւպատոսն արտասվում էր և պատասում կատաղի զինուորներին՝ չկոտորել անմեղ հայերին։

Գպրոցների աշակերտներն ու ուսուցիչները պատսպարան գտան նոյնպէս հիւպատոսարաններում, մի մասն էլ փախաւ քաղաքից դուրս։ Ոչ միայն զօրքը, այլ և բաշիբուզուկներ և շատ զինուորներ ու ոստիկաններ բաշիբուզուկների գլխաւոր թաղից թաղ հալածելով ու կոտորելով ապաստանուած հայերին, շարունակեցին իրանց կոտորածը շրջակայ գիւղերում, որոնք բոլորովին աւերուած և մոխիր են դարձած։

Վիրաւորուածների և սպանուածների թիւը 2000-ից անցնում է։ Թալանուած և աւերուած են բազմաթիւ տներ։

Գիշերով սպանուած հայերի բազմաթիւ դիակները կառավարութիւնը փոխադրել տուեց քաղաքից դուրս և թափեց վ ա գ օ ր օ ք պատրաստուած փոսերի մէջ։

Երկիրը ընդհանուր լինելու վտանգի մէջ է. անկարգութիւնը շարունակվում է,

—

ԷՐԶՐՈՒՄԻՑ մեզ գրում են.— Կարնոյ սպանելոց մէջ ևս կը գտնուին երկու քահանայ, որոնց մին քաղաքէս է և միւսը Դմնիկ գիւղէն, որ այդ օր քաղաք եկած էր բոլորելու իր տան վրայ տեղի ունեցած յարձակման ու կողոպտման մասին»։

«Քաղաքին ու գիւղերուն վնասը կարելի է հաշուել իբր մէկ միլիոն Օսմանեան լիրա (ինը միլիոն ռուբլուց աւելի)»։

«Վիրաւորեալները, որոնք հարիւրներով կը հաշուուին, կը խնամուին ֆրէյներու վարժարանին մէջ, որոնք մարդասիրաբար կը հոգան անոնց ամեն պէտքերը»։

*) Այս հեռագիրը խմբագրութիւս ըստացել էր անցեալ ամիս, հոկտեմբերի 28-ին ուրբաթ երեկոյեան և տպվում է այսօր։ Ծ. Խ.

«Զմռնանը ըսել նաև թէ փակ են վարժարանները, եկեղեցին, առաջնորդարանը և չգիտենը թէ երբ պիտի վերաբացուին»։

—

ՄՈՒՇԻՑ գրում են մեզ.—«Ամսոյս 11-ին այստեղ հասաւ Պայազիտէն մեր նորընտիր միլիսեսերիֆ Արիֆի փաշան, որ Պայազիտի համար պիտի փոխանակէ մեր նախկին կառավարիչ Ֆիխամ փաշան։ Նորիկ կառավարիչն, ըստ վաղեմի սովորութեան, զօրքերով դիմաւորութեան գնացին կառավարչական ժողովոյ անդամը, թուրք խաղիշների ներկայացուցիչներ, ազաներ։ Տեղիս անգլիական պ. հիւպատոսն էլ իւր թարգման հայազն պ. Յակոբ Միրզոյեան ուղարկեց, իսկ ազգային առաջնորդարանը իւր խորհրդոյ անդամներից մէկ։ Մենք կը կարծենք, որ նորիկ կառավարիչ փաշան իւր առաջին գործողութիւնը ցոյց պիտի տար մահմեդականները զինաթափ առնելովը։

«Կառավարութիւնը Սասունից յետ վերակոչից իւր ներկայացուցիչ խնամակալ յանձնաժողովին։ Այդպէս էլ բոլորովին անակնկալ կերպով այնտեղէն յետ կոչեց առաջնորդական տեղապահ հայր Վարդան վարդապետը և միսիոնարական յարգելի փոքրիկ խումբը՝ մսոր-Քօլը, բժիշկ Ուէլլէնս, պատուելի Յովհաննէս և նոցա ծառաներ։ Բայց թէ ինչ առիթներից դրդուած նա բարեհաճեց վերջնականապէս փակել Սասնոյոց ապրելու այդ միակ մնացած ճանապարհ, անշուշտ բացատրութեան կարօտ չէ։ Կառավարութեան այդ պահանջին մեծ ընդդիմութիւն ցոյց տուաւ անդրկացոց պ. հիւպատոսը։ Երկու կողմից ևս հեռագրած է Գ. Պոլիս. մէկ Բ. Դրան, իսկ միւս իւրենց դեսպանին։ Տեսնենք հետանքը ուր կը յանգի»։

«Ցորենի գինը երթալով կը պակսի։ Կարմիր ցորենը այժմ շնիկը 16 դուրուշ կը վաճառուի. գարին, կկալ և կորեկը կարծես հողին հաւասարուած է. իւղի լիտրը որ 6 օխայ է, այժմ արժէ 33 դրշ.»։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՃԱՓՈՆԻԱ.—Տոկիոյից հեռագրում են «Daily-News»-ին. — Մտրերը սաստիկ յուզուած էին, այժմ հանդստացել են, սակայն լցուած են վճռականութեամբ՝ ճափոնական զօրաբանակն ու նաւատորմիղը ամենաուժեղը դարձնել երկրի այս մասում և իրանց առևտրին ու արդիւնաբերութեան այնպիսի զարգացումն տալ, որ երկիրը զինուորական սաստիկ ծախսերից որևէ ծանրութիւն չզգայ։ Սակայն առաջին տեղը բռնում է պատերազմական այժի մեծացնելը։ Ինչպիսի զոհեր, ինչպիսի ծանր պարտքերի տակ ընկնել էլ պահանջուի, ճափոնիան տասը տարուայ ընթացքում պէտք է իւր ցամաքային այժը ամենաարագը կէտին հասցնի և այնպիսի նաւատորմիղ ունենայ, որ կարող լինի ճափոնիայի վերակշռող դիրքը Խաղաղ օվկիանոսում պահպանել։ Այդ երկրում, որ այնքան կուսակցութիւնների է բաժանուած, այս խնդիրների վերաբերմամբ հաղուագիւտ միաձայնութիւն է արտայայտում։ Ընդդիմադիր կուսակցութիւնը կը հաշտուի, երբ կառավարութիւնը պարլամէնտից զինուորական նոր վարկ պահանջելու լինի։ Ծայրայեղ դէպքում դուրս կրգան այնպիսի պատգամաւորներ, որոնք նոյն իսկ կառավարութեան պահանջները մեզմ կը համարեն։ Պաշտօնական լրագրները հաղորդում են, թէ զօրքի թիւը խաղաղ ժամանակի համար 250,000-ի հասցնելու մտադրութիւն կայ։ Մինչև այժմ ճափոնիան խաղաղ ժամանակները պահպանել է միայն 66000։

ճափոնիան մտադիր է Չինաստանից ստանալիք պատերազմական տուգանքը իւր զինուորական այժերը մեծացնելու համար ծախսել։

—

ԹԻՒՐԻՒ.—„Neue Freie Presse“ լրագիրը հաղորդում է, որ Կրէտէ կղզու վրայ յունական կոմիտէտ է կազմուած և թէ կարելի է սպասել որ այնտեղ այսօր կամ վաղը ապստամբութիւն բռնէ։

—

ՓՐԱՆՍԻԱ. — Փարիզում մամուլի օրգաններն ու հասարակական-պետական զանազան գործիչներ իրենց խորհուրդներն են տալիս նոր կազմակերպուած նախարարութեանը։ Իւր ձայնը բարձրացրել է և Կլեմանսոն մի յօդուածով, որի վերնագիրն է «Արիացէք»։ Խօսելով այն հանգամանքների մասին, որոնցից ծընունդ առաւ նոր կաբինէտը, Կլեմանսոն ասում է. «Ըստ երևոյթին ռէֆորմների թշնամիները դադար չպիտի տան նոր կաբինէտին։ Այդ մի երջանիկ հանգամանք է կաբինէտի համար, որովհետև այստեղից է ծագում գործելու անհրաժեշտութիւնը։ Եթէ նախարարութիւնը պահպանողական քաղաքականութեան հետևի, ապա կորած է։ Եթէ ռէֆորմները առաջիկայ տարուան թողնելու տեղ՝ նա գրականապէս հէնց առաջին օրից գործին կպչի, դրանով պատին կը սեղմի իւր հակառակորդներին, որոնք այդպիսով ստիպուած կը լինին հրաժարուել ակնյայտնի արգար ու բարի ձեռնարկութիւններին աջակցելուց, և հասարակական կարծիքը կը վաստակի։ Եթէ նախախարարութիւնը տատանուի, նրա օրերը հաշուած պէտք է համարել։ Պարոններ, ձեզ մի գեղեցիկ դէպք է ներկայանում։ Դուք ֆրանսացիներ էք, արիացէք»։

Խորհուրդ է տալիս նախարարութեանը և Միլլերանը։ Նա հրաւիրում է Բուրժուային յիշել, թէ սրպիսի պայմաններից ծագեց իւր կաբինէտը, և միշտ նկատի ունենալ, որ միակ փրկութիւնը իւր ծրագրին իրագործելու մէջն է։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Նոյեմբերի 2-ից.

ՎԻԵՆՆԱ —Լիւկերը երկրորդ անգամ ընտրուեց քաղաքապետ, ուստի և կառավարութիւնն արձակեց ազգային ժողովը

Կ. ՊՕԼԻՍ. — Հաղորդում են որ նորանոր ընդհարումներ են տեղի ունեցել Մամուրէթ-Ազիզ վիլայէթում, նոյնպէս և Սիվասի վիլայէթի շատ գիւղերում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նոյեմբ. 1 ին։ Այս օրուայ երրորդ (ազնուականաց բանկի) փոխառութեան վիճակախաղին, վաստակել են հետևեալ խաղատոմսերը.

№ սերիի.	№ տոմսի.	Գումար. դուր.	№ սերիի.	№ տոմսի.	Գումար. դուր.
3081	25	200000	11837	43	1000
10025	39	75000	3584	19	1000
8599	32	40000	11413	38	1000
11183	47	25000	3959	41	1000
14792	11	10000	6030	22	1000
169	26	10000	9339	32	1000
3686	17	10000	1969	5	1000
1172	32	8000	14886	43	1000
11765	48	8000	14018	41	1000
2305	23	8000	13660	43	1000
2433	46	8000	4079	10	1000
9590	36	8000	2970	3	1000
8058	8	5000	11594	25	1000
14339	13	5000	8961	29	1000
9191	39	5000	7864	34	1000
6595	6	5000	7830	35	1000
2075	18	5000	3530	11	1000
10443	17	5000	4819	10	1000
4513	7	5000	2743	47	1000
10679	22	5000	15295	37	1000

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Հոկտեմբերի 31-ից.

Վէքսէլի կուրս 3 ամսով։
Լէնդօնի վրայ 10 ֆ. ստ . . . 93, 05
Բերլինի վրայ 100 մարկ . . . 45,325
Փարիզի վրայ 100 ֆր. 36, 85
Նոր կարած պօլիմպերիաները . . . . . 7,40 գն. 7.40 վաճ.
Բօրսայի գեղջը 6½-ից 7½%
4% Պետական արժեթղթ. 97¾
5% ոսկ. արժեթ. 1894 թ.160
5% Առաջին ներքին փոխ. խաղատոմս 1864 թ. . . .267¼
5% երկր. ներքին փոխառ. խաղատոմս 1866 թ . . .230
5% Ընդհանուկ. հող. բանկի գրաւական. խաղատոմս.208
5% Պետական երկթուղու արժեթղթեր 101
4% ներքին փոխ. I սեր. 97½
„ „ „ II „ 97½
„ „ „ III „ 97½
„ „ „ IV „ 97½
4½% փոխ. 1893 թուի. 101
„ փոխ. 1 հրատարակ.100¼
„ փոխ. 2 հրատարակ.100¼
4½% Գրաւակ. արժեթղթ. ազն. հողային բանկի. .100¼
4½% Գիւղական հողային բանկի վկայագրեր. . .149
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ. 99¾
„ Մոսկուայի 100
5½% Օդեսայի 99¾
5% Թիֆլիսի 98
5% Գրաւակ. արժեթ. հող. բանկերի Խարկովի . . .100
„ Պօլտաւայի 99½
„ Տուլայի 100½
„ Կիևի 100¼
„ Մոսկուայի 100½
„ Բեսարաբիայի 98¾
„ Ներքին Սամարայի . . .100½
„ Դոնսկոյ 99⅛
„ Վելինսկի 99½
6% և 5% Թիֆլիսի . . . .101 և 99½ գն.
„ Քութայիսի. . .101 և 99½ գն.

ԶԱՆԱԶԱՆ

Հասարակական տելեֆոններ Կօպենհագէնում. — Կօպենհագէնում հաստատուել է մի բաժնորդագրական ընկերութիւն 100,000 կրոն դրամագլխով, որի նպատակն է քաղաքի բոլոր հասարակական այգիներում և տեղերում փոքրիկ տնակներ շինել, ուր դրուած կլինին հեռախօսներ։ Նոյն այդ տեղերում կարելի կը լինի կարդալ ամենակարևոր լրագիրը. յամախորդները մի փոքրիկ վարձ հատուցանելով կարող կը լինին օգտուել հեռախօսից, լրագիրներ կարդալ և նամակներ գրել։ Տնակների կից ամրացրած կը լինին փոստային արկղներ և կրծխուն գրելու պարագաներ։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱՐՇԱՒԻՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՀԻԿՈՎԱՆԻ—9 -10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՈՐՕԿԻՆԱ—ՀՀԵՐԲԻՆԻՆԱ—11—12 ժ. կանանց հ. ներքին հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՅԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՅԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մաշթի հ.

Բ. Ա. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան

ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.

ԱԼԵՏԻՐ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Բացի գեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵՔՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունվում են ամեն օր (բացի կիրակի և տոն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը { կինոմատներ և երեխաներ
1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան { տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասնագետ անող կին և մասնաժիտ պարոն։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բազու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բազու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բազուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 ր.։

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹԻՒՆը

Վրաց պատերազմական ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մշէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մշէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ՀՈԴԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ չոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև։

Բաթումից դուրս է գնում՝

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով՝ Նովօրոսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սեւաստապօլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին), ապրանքա-մարդատար չոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը (լոյս հինգշաբթի գիշերուայ 3 ժամին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օդեսայից գալիս է Բաթում՝

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով։

Չորեքշաբթի և ուրբաթ օրերը—երեկոյեան, շրջանառու ընթացքով։

Երեքշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար չոգենաւը, շրջանառու ընթացքով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱՊ Է

«ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԵՔ»-ԻՑ „МАТЬ И КОРМИЛИЦА“ ռուսերէն և «ԳՐԱՄՈՒԼԻԿ-ԱՂՋԻԿ»„—ДѢВОЧКА-БРОДЯГА“ անդրիերէնից՝ հայերէն թարգմանութիւններ։

(2-1) Արտակ Պարզեանց։

ԲԺԻՇԿ ԱՐՏԱՔԻՍ ՔԻԵԱՆ

Ներքին հիւանդութիւններից բուժում հիւանդներին ընդունում է ամենայն օր երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։ Վէլիամինովսկայա փողոց № 24։ (3—2)

ՔԱՄՈՑԵՆՑ Տափի թաղի Ս. Գէորգ եկեղեցու կրօսակներից տրվում են վարձով, Դիմարցուվայեայ փողոցի վրայ գտնուած երկու կրպակ։ (1—2)

ԹԻՖԼԻԶԻ ՁԻՒԱՔԱՐՇ-ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիզի ձիաքարշ-երկաթուղիների ընկերութիւնը յայտարարում է ի գիտութիւն հասարակութեան, որ այս տարուան նոյեմբերի 1-ից երկաթուղու կայարանի և Միքայէլեան կայաններում հասարակութեան խնդրանօք պիտի վաճառուին հինգ կոպէկանոց տոմսակներ մինչև Օրթաճալա, մի վագոնից միւս վագոն փոխուելու պայմանով, Վարանցովի կամուրջի մօտ և Սամանի հրապարակի վրայ։

Ներկայ էժանացրած գները մոցնվում են իբրև փորձ մինչև ցնոր կարգադրութիւն։ (4—2)

„ԹԱՏՐՈՆ“

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՊԱՏԿ. ՀԱՆԴԷՍ

Ներկայ 1895 թուակ. II-րդ №-ը լոյս կը տեսնէ մինչև առաջիկայ դեկտեմբ. 15-ը։

Բովանդակութիւն՝ «Բաղդասար աղբար» կոմ. 3 գործ. Պարոնեանի, «Հասարակութեան նեցուկները» դր. 4 գործ. Իբսէնի, «Դօն-Ժուան» Պուշկինի, Մօցարտի մանկութիւնը մանկ. պիես 1 գործ. Հայերէն պիէսների լիակատար ցանկը, և մի շարք այլ յօդուածներ։

Երկու գրքի գինն է 3 ռուբ. օտարքաղաք. համար 3 ռ. 30 կոպ. արտասահման 10 ֆր.

Հրատարակիչ՝ ՕՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ

Հասցէն՝ Тифлисъ. Александру Тарханьянъ, կամ Tiflis, A. Tarkhanian.

«Թատրոն»-ի առանձին № №-ը բացառապէս վաճառվում են «Կենդրոնական գրավաճառանոցում», իւրաքանչիւր №-ը 2 ռուբլի։

ԹԻՖԼԻԶԻ ՁԻՒԱՔԱՐՇ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վարչութիւնը պատիւ ունի տեղեկացնելու յարգելի հասարակութեան, որ 1895 թ. Սեպտեմբերի 19-ի ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԱՒՆԵՒՑ՝ մինչև ցնոր կարգադրութիւն, Ընկերութիւնս՝ ՈՐՊԷՍ ՓՈՐՁ, հետևեալ պակասացրած գնարներն է սահմանում ձիաքարշով երթևեկողների համար.

ՀԻՆ ՍԱԿԱՏԳՆԵՐԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՈՒԺԻ.

Երևանեան հրապ. մինչև երկաթ. կայարան Մէջքայ. կամուրջով և Մուշտ. վրայով Վագզալից մինչև Երևանեան հրապ. Մուշտայիդի վրայով և Մէջք. կամուրջով	Կայանի մօտ մէկից միւս վագոնը նստելով 5 կ.
Երևանեան հրապ. մինչև Վագզ. Գօլով. պրոսպ., Վէրայի և Մուշտ. վրայով Վագզալից մինչև Երևան. հրապ., Մուշտ. վր., Վէրայի կամուրջով և Գօլ. պրոս.	Օլդինսկ. փոդոցում մէկից միւս վագոնը նստելով 5 կ.
Սաղից մինչև Վագզալ Մուշտայիդի վրայով . . . . . . Վագզալից մինչև Սաղը Մուշտայիդի վրայով.	Վօրօնց. արձանի մօտ մէկից միւս վագ. նստ. 5 կ.
Սաղից մինչև Երևանեան հրապ. նոյն հրապարակի գծով . . . . . . Երևանեան հրապարակից մինչև Սաղը Երևանեան հրապ. գծով	Վօրօնց. արձանի մօտ մէկից միւս վագ. նստ. 5 կ.
Վօրօնցովի արձանից մինչև Վէրա Երև. հրապ. և Գօլով. պրոսպեկտով . . Վէրայից մինչև Վօրօնցովի արձանը Գօլով. պրոսպ. և Երևանեան հրապ. .	Երևան. հրապար. վրայ մէկից միւս վագ. նստ. 5 կ.
Վօրօնցովի արձանից մինչև Օլդին. փոդ. Մէջք. փոդոցով և Վէրայի կամուրջ. Օլդինսկի փոդոցից մինչև Վօրօնց. արձ. Վէրայի կամուրջով և Մէջքայ. փոդ.	Կիրօչ. և Մէջք. փոդ. ամենին. մէկից միւս վագ. նստ. 5 կ.
Մէջքայէլեան փոդոցից մինչև Օլդինսկի փոդոց Վէրայի կամուրջով . . . . Օլդինսկի փոդոցից մինչև Մէջքայէլեան փոդոց Վէրայի կամուրջով	3 կ.

(10—8)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵԱԿՕՐ“

Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ռ. ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԴՈՒՄԱՐՆԵՐԻՑ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծովային գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի։

ԿԵՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. դրամագլխի, որ պիտի ետ տրուի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում արուում դրամագլխին ապրուստի միջոցների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունվում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկուայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ՝ Թիֆլիզում (Վէլեամինովսկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ՝ Կայսրութեան բոլոր քաղաքներում։

Հատարակութեան յարմարութեան համար ապահովագրութիւնների ընդունելութիւնը բացուած է Կուկիայում, 3-րդ հաշտարար դատարանի կողքին, տ. Աղեքսանի, Թեոդոր Աղեքսանդրովիչ Իսմոլի բնակարանում։ (100—46)

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԱՑՈՒՐԵԱՆՑԻ

Տեղափոխուած է Բարոնսկայա փողոց, Կոլուբակովս տունը՝ պահականոցի մօտ։ (15—7)

Պատիւ ունիմ յայտնելու Կովկասի պ. պ. վաճառականներին, որ ես լինելով մշտապէս ՎԱՐՁԱՎԱՃ, յանձն եմ առնում և կատարում ես ամեն տեսակ յանձնարարութիւններ, ես առաւել կաշուեղէն ապրանքների առնելում, որին ես լաւ ծանօթ եմ, և նոյնպէս կարած ստանամների։

Իմ հասցէն. Варшава, Переѣздъ домъ № 9. Товмасъ Яргульянцъ. (10—6)

Дозволено цензурою, Тифлисъ 2-го Ноября 1895 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и К°. На Михайловской ул., № 81.